

ՀԱՍՏԻԿ ԳՈՒԼԱԿՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ.

ԱՌԵԴԾՎԱԾՎԱՐՆ ԱԿՆԹԱՐԹ

ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐ



ԵԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ – 2013

ՀՏԴ 891.981.0

ԳՄԴ 83.3Հ

Գ 950

Հրատարակվել է Համակիր ընկերների հովանավորությամբ:

Գուլակյան Հասմիկ
Գ 950 Նարեկ Հովսեփյան. Առեղծվածային ակնթարթ (Գրական
դիմանկար) /Գուլակյան Հասմիկ.՝ Եր., «Եղիթ Պրինտ»,
2013, 80 էջ:

Գրքույկում ներկայացված են պատառիկներ Նարեկ Հովսեփյանի (1986–2004) մտքերից ու դատողություններից՝ որպես ախտահարված մեր նկարագրի և խեղված ինքնության բալասան: Հայրենիքում արժանապատվորեն ապրելու, օտարի ողորմածությունից չկառչելու, սեփական մշակույթն ու գիտությունը կարևորելու Նարեկ Հովսեփյան մտածողի հորդորներն առկախված են, իսկ երանելի արքայի՝ Տիգրան Մեծի դասերը յուրացնելու մեր պատրաստակամությունը, դժբախտաբար, գեռ շատ է տկար, ճիշտ կլինի ասել՝ անմատչելի (դատելով մեր այսօրվա կացությունից)...

ՀՏԴ 891.981.0

ԳՄԴ 83.3Հ

ISBN978-9939-52-778-9

© Հասմիկ Գուլակյան, 2013թ.

© «Եղիթ Պրինտ» հրատարակչություն, 2013թ.

**Սիրով նվիրում եմ
Նարեկ Հովսեփյանի ծննդյան 25-և
ՀՀ անկախության 20-ամյակներին՝
Նարեկի անունից մաղթելով մեր երկրին՝
իր քաղաքացիների համար արժանապատիվ
ու բարեկեցիկ կյանք ստեղծելու և
ազահովելու համք ու կորով:**

ԱՌԱՋԱԲԱՆ

ՀՐԱՇԱՄԱՆՈՒԿԸ

Անմահությունն սկսվում է հայրեմիքի սիրուց:
Նարեկ Հռվիտական

Կարդում ես Նարեկ Հռվիտականի խորախորհուրդ մտքերը
և մտածում, թե այդպիսի մի արտասովոր հայ էր նաև Պապ
թագավորը, որն ընդամենը 17 տարեկանում քաղաքական
այնպիսի խելացի ու ազգափրկիչ ծրագրեր սկսեց իրակա-
նացնել, որ սարսափեցրեց բյուզանդական արքունիքին և դա-
վագրաբար նահատակվեց նրա ձեռքով:

Հազար ափսոս, որ Նարեկն այդքան վաղ է հեռացել
կյանքից, և նրա աստվածային եղակի իմաստությունը չի ու-
նեցել շարունակություն: Նրա մտքերը պատշաճում են մեծ
կենսափորձ ունեցող հզոր գրողի, որն աշխարհ է տեսել, բազ-
մազան շփումներ է ունեցել, կյանքի երկար ուղի է անցել,
տիրապետել է տարբեր լեզուների: Դրանք մարգարեություն-
ներ են, որոնք միստիկական խորհուրդ ունեն. նրանց մեջ
մարդկության դարավոր կենսափորձն է՝ շատ երիտասարդ,
գրեթե մանկական ուղեղից ծնված:

Եվ այդ ամենը՝ ոչ մայրաքաղաքային միջավայրում, ոչ
հատուկ հսկողության ներքո: Ես սրտի անասելի ցավ եմ
զգում մեր ազգի կորստի համար. ինչ պայծառ երևույթ ենք
կորցրել՝ դեռ ձեռք չբերած, ինչ անփութություն ենք ցուցա-
բերել մեր այս դժվար օրերին Աստծուց մեզ մատուցված
պարզեխն:

Նարեկը ծնվել է 1986-ին՝ Արցախյան շարժումից երկու
տարի առաջ, մեզ հետ կրել է ազատագրական պայքարի բոլոր
դժվարություններն ու տառապանքները և, ինչպես Ան-
տուան դը Սենտ Էկզյուպերիի Փոքրիկ իշխանի նման հայտ-
նըվել էր դժվար պահին՝ թողնելով իր արտասովոր երևույթ-
իմաստություն մոլորակը, այնպես էլ ձուլվել է հավերժին:

Եթե փորձենք գիտականորեն դասակարգել Նարեկի գրական ժառանգությունը, որն ավելի քան փիլիսոփայական ուղղվածություն ունի, ապա պետք է փաստենք, որ նա քննել է միկրոկոսմի ու մակրոկոսմի փոխկապերի խնդիրները և այդ կապի մեջ մարդու համար թողել է լուսավոր այն հույսը, որն առկա է նաև Նարեկացու «Մատյանում»:

Նարեկ Հովսեփյանը մեզ է ավանդել իր մաքսիմները, որոնք պատգամներ են՝ ուղղված իր ազգին, թողել է իր եզրահանգումները մանկավարժության, դպրոցի, գիտության, երաժշտության, գրականության, հոգեբանության, հավատիւ, ամենակարեւորը, հայրենասիրության վերաբերյալ:

Աշխարհի մասին Նարեկի գիտելիքների հիմնական աղբյուրը եղել են բազում-բազում գրքերը, որոնք նրա ամենօրյա սննունդն էին: Որքան ճիշտ է նա բնութագրում գերիրապաշտ Սալվադոր Դալիի արվեստը. «Մի մեղադրեք սյուրուեալիստ նկարիչ Սալվադոր Դալիին: Նրա հանցանքն ընդամենը իրերի խորքը տեսնելու անմեղ ցանկությունն էր»: Որքան կուզեի, որ քեզ նման բացառիկ հրաշամանուկը եղած լիներ Բարսելոնում, տեսներ Սալվադոր Դալիի գործերի հսկա հավաքածուն, տեսներ Անտոնիո Գառուդիի «Սագրադա Ֆամիլիան», որը պիտի խոսեր աստվածային հոգունդ հետ: Սակայն, առանց դրանք տեսնելու, դու, թվում է, գիտես դրանց մասին, դու, թվում է, եղել ես Ամստերդամում, հիացել Վան Գոգի նկարների թանգարանով ու ներկայացրել այդ նկարչի արվեստի գնահատման քո հրաշալի բանաձեռը. «Ով չի տեսել Վան Գոգի հիասքանչ հոչակավոր «Արևածաղիկները», նա չի հասկացել, որ նկարչի հոգին արեի ծարավ է, լույսի կառուտ...»:

Նարեկը տեսնում է կյանքի երեսույթներն առավել բարձրից, քան մարդկային գլուխն է: Անշուշտ կարդացել է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը և խորապես հասկացել այդ գլուխգործոցի վերժամանակյա ու համամարդկային խորհուրդը, լսել Նարեկացու՝ հանուն մարդու մաքրագործման ու աստվածանալու արձակած այն սաստող ճիչը, որի ձայնը լսվում է դարերի խորքից. «Հայ գրակա-

Նության մեջ Նարեկացու հայտնությունն օրինաչափություն էր, թե՞ պատահականություն:

Զմեկնաբանենք:

Կարեւորն այն է, որ աշխարհին և մարդկությանն արժանապատվորեն ներկայանալու հնարավորություն ունենք՝ ի դեմս հրաշագործ «Մատյան ողբերգության»:

«Աշխարհի կոմպոզիտորներ» հանրագիտարանում, որը կարդացել եմ Տորոնտոյում, կան Կոմիտասի և Արամ Խաչատրյանի անունները՝ համապատասխան հոդվածներով, որոնք դրել են առաջնակարգ մասնագետներ: Նարեկի՝ այդ կոմպոզիտորներին տված գնահատականները կպատշաճեին ամենահեղինակավոր հանրագիտարանի սեղմ բնութագրմանը. «Կոմիտաս երգահանի հոգեւոր ժառանգությունը հայ ոգու ամենանուրբ ծալքն է՝ համեմված ժողովրդական ստեղծագործ իմաստությամբ:

Խաչատրյանն այդ նույն ոգու կամքի մեկնաբանն է. իր երաժշտական հրաշակերտ, Հզոր կառույցներին շաղախել է կորով և առնականություն...»:

Շատ շուտ է հասկացել Նարեկ Հովսեփյանը դպրոցի և ուսուցչի դերը մարդու և ազգի կյանքում. «Դպրոցն ուժի աղբյուր է», – ահա նրա բանաձեռ, որը միշտ արդիական է լինելու: Մտավոր ու հոգեկան տվյալներով շատ բարձր լինելով իր ուսուցիչներից՝ բնականաբար խոցվել է վերջիններիս փոքրոգության պատճառով, և ծնվել է հետեյալ դիտարկումը.

«Ասացիր՝ իբր ուսուցիչ ես դու, քեզ հավատարիմ աշակերտ եղաք:

Ասացիր՝ իբր բազում է հոգսդ, ես որդիաբար քեզ նեցուկ եղաք՝ մնալով խոնարհ:

Իսկ երբ իմ մասին քեզ հարցում արին, թե ո՞վ եմ կամ ի՞նչ,

Զեռքդ չդողաց՝ ինձ ընդամենը չորս «ընծայեցիր» մեծահոգաբար:

Ուսուցի՛չ, ասա՛, անունդ ի՞նչ էր»:

Պետությունը Նարեկի համար սկեռնամիտ գաղափար է: Նա էլ անտիկ ժամանակներից եկող իմաստունների նման հա-

մողված է. «Պետությունը կարիք ունի պետական մտածությամբ այրելի»:

Հայրենիքն ու պետությունը նրա մտածումների հիմնական առանցքն են: Նա հիանալի գիտե Հայաստանի անցած պատմական ուղին, իր՝ թագավորի կատարելատիպը Տիգրան Մեծն է, ինչպես Մովսես Խորենացու համար՝ Տիգրան Երվանդյանը, և ինքն էլ մեր հանճարեղ Պատմահոր նման ուղում է ներկա Հայաստանի պետական այրերի մեջ արթնացնել Տիգրան Մեծի ոգին. նա գիտակցում է, որ իր Հայրենիքը շատ դարեր առաջ վայելել է աշխարհակալ լինելու փառքի հաճույքը: Նարեկ Հրաշամանուկին անհանգստացնում է ներկայիս անկախացած Հայաստանի պետականության ճակատագիրը. վերջինիս հզորացմանը նպաստելու մտահոգությունը նրան ուղեկցում է ամեն պահի. «Պետական այն այրերը, որոնք անձնական շահը գերադասում են պետականից, առնվազն ջուր են լցնում թշնամու ջրաղացին...»:

Մեծն Հովհաննես Թումանյանը պահանջում էր, որ հայ գրողը հառաջի իր ժողովրդի մեծ Հառաջանքը: Նարեկը՝ այդքան մանկահասակը, փորձում է ելքեր գտնել իր ժողովրդին խոսքով օգնելու, այնպիսի պատգամ տալու, որը նրան կտանի դեպի լույսն ու բարեկեցությունը:

Թվում է, թե նրա եզակի գրական երախայրիքը՝ «Նոյյան աղավնու վերալարձը» վիպակը, հայ ժողովրդին գարավոր կորուստներից ու օրհասներից վերջապես փրկելու ծրագիր է: Ինչպես աշխարհակործան ջրհեղեղի ավարտն ավետել է նոյյան աղավնին, այնպես էլ Նարեկ Առաջին արքայի ծրագիրը մշտապես ու հավետ անխոցելի է դարձնելու Հայաստանը:

Վիպակում խառնված են ժամանակները, Հայաստանի անցյալն ու ներկան խիստ շաղկապված են, որովհետեւ 14-ամյա Նարեկ արքան գիտե իր երկրի անցյալը, կարգավորում է ներկան, կանխատեսում ապագան:

Վիպակում առկա են Մովսես Խորենացու գլուխգործոցի, եղիշեի ոսկետառ մատյանի, «Սասնա ծռեր» հերոսական էպոսի ոգին ու պատգամները: Հայերի մշտական առաջնորդներն են Տիգրան Մեծը, Վարդան Մամիկոնյանը, Սասունցի Դավիթը, Անդրանիկ զորավարը, ցեղակրոն Նժդեհը:

Հայաստանը հզորացնել կկարողանան մարտունակ բանակն ու առաջնակարգ դպրոցը. «Դպրոցաշինությանն ու ուսուցմանը հատկացվելիք գումարը պետք է մոտ լինի ռազմական ծախսերին»:

Հեղինակը շատ է կարևորում ուսուցչի գերը պետության հզորացման գործում, իսկ ուսուցչի առաջ դնում է խիստ անհրաժեշտ պահանջ՝ խոր գիտելիքներ և նվիրում դպրոցին ու աշակերտին: Այդ պայմաններին չհամապատասխանող ուսուցիչը որակազրկվում է ու հեռացվում դպրոցից: Ազգի հաջողությունների գրավականներից մեկն էլ ազգային միասնությունն է, որի առհավատչյան այն սրբազն ուխտն է, որ արքան կնքում է ժողովրդի ու նախարարների հետ՝ երդվելով Աստվածաշնչի, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» վրա:

Ուշագրավ է, որ այս երեք գրքերն ազգի պահպանման երեք նախահիմքերն են: Այո՛, ամեն ազգ պետք է իր կյանքը կարգավորի ըստ աստվածաշնչյան տասը պատվիրանների: Հայ ազգը մշտապես ուղենիշ պետք է ունենա Պատմահոր մատյանը և հիշի իր քաջամիրտ առաջնորդներին՝ Հայկին, Արամին ու Տիգրանին, որոնք երբեք չխոնարհվեցին թշնամու առաջ և մնացին աննկուն, իսկ նարեկացու «Մատյանն» ամեն հայի պետք է պահպանի չարի որոգայթներից ու մեղսագործ դառնալու վտանգից:

Հետաքրքիր կանոնակարգ է մշակում նարեկ Առաջինն իր պետության խորհրդարանի՝ Ազգընատիր գագաթաժողովի համար, որտեղ երեսփոխանների 60 %-ը մեծահարուստներ են, որոնք զրկվում են պատգամավորական աշխատավարձից, բայց փոխարենը վայելում են ժողովրդի սերն ու հարգանքը, 30 %-ը նշանավոր գիտնականներ են, որոնց գերը վճռական է օրենքներ մշակելիս և ընդունելիս, իսկ 10 %-ին, որոնք ժողովրդի հարգանքը վայելող անվանի պետական ու մշակույթի գործիչներ են, նշանակում է կառավարությունը: Ինչոր առումով նարեկ Առաջինի գլխավորած պետությունը հիշեցնում է Տօմազոն Կամպանելոյի «Արևի երկիրը» ուսուպիան, որի համար վերջինիս ցից հանեցին:

Նարեկ հրաշամանուկն իր ազգակիցներին ապրելու, արարելու խրախույս է հղում հետեւյալ պատգամով.

— Մի՞թե մեզ հետ չեն մեծն Տիգրանի, քաջն Վարդանի, անկասելի Անդրանիկի և բազում այլ քաջերի լուսեղեն ոգիները։ Դադարել ենք հայ լինելո՞ւց, թե՞ մոռացել ենք արիական մեր ծագումն ու փառապանձ Մասիսների խորհուրդը։ Ըմպենք Կաթնաղբյուրի կենսատու ուժի ակունքներից՝ գորովագութ ու կորովի Դավթի նման։

Հետաքրքիր է, որ Նարեկը վիպակում մեծ դեր է հատկացնում հայ կնոջը՝ պահանջելով, որ նա անդամակցի իշխանությանն ու մասնակցի երկրի կառավարմանը։ Ուշագրավ է, որ երկրի թագավորն ու թագուհին պետք է լինեն իրենց արժանապատվությունն ընդգծող հագուստներով, սակայն հեռու մնան ավելորդ պերճանքից։

Նարեկ Առաջինը, իր պետության բարօրության խնդրում մեծ տեղ տալով դպրոցին ու գիտությանը, չի մոռանում արվեստը։ Այդ առումով մեծ դեր է հատկացնում հեռուստատեսությանը. այն պետք է ծառայի ազգի շահերին և ոչ թե գլուքացմանը, չպետք է տարվել օտար ու վնասակար մշակույթներով։ Հեռուստատեսությունը պետք է զարգացնի ճիշտ լեզվամտածողություն։ Նարեկ Առաջինը հայոց բանակի համար մայրենի լեզուն կարևորում է այնպես, ինչպես գերազանց զինվածությունն ու խիզախությունը. «Մեր բանակի ամենահզոր դաշնակիցը հայոց լեզուն է»։

Եվ ամենակարեորը, որ պատգամում է Նարեկ Առաջին արքան, այն է, որ հայ ժողովուրդն իր ներկայի ու ապագայի ցանկալի վիճակի համար հույսը պետք է դնի միայն ու միայն իր վրա ու երբեք մուրացիկի նման ձեռքը չմեկնի օտարից օգնություն հայցելու համար։

Նարեկ Առաջինը սրբորեն հիշում է «Սասնա Շոեր» հերոսական էպոսի խաղաղասիրական ոգին և մերժում է պատերազմը ոչ միայն իր ազգի, այլև ողջ աշխարհի համար. «Ովքեր խոնարհվում են պատերազմի Զարին, նրանք դեմ են բանականությանը», — ասում է նա։

Նարեկի համար «Մարդկային բանականությամբ ստեղծված ամենահանճարեղ գյուտերից մեկը գիրքն է...»։

Սիրելի նարե՛կ, չգիտեմ՝ դու եղե՞լ ես արդյոք Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, սակայն քո մտքի թռիչքը հասել է նաև այնտեղ, վայելել մեր մագաղաթյա մատյանների առինքնող հրաշագեղությունը և քո գրչի տակ դարձել համակող ձոն. «Հայոց ոսկեղենիկ գրաբարը մարմնացյալ երաժշտություն է, որը հնչել է առ Աստված մեր անձեռակերտ տաճարների լուսեղեն կամարների ներքո՝ որպես լինելության աղոթք և աներկբա հույս»:

Այսօրվա մեր գոյությամբ պարտական ենք խնկաբույր գրաբարին...»:

Նարեկը եղել է նաև մաթեմատիկոս և տիեզերքի գաղտնագրումը տեսնում է հենց թվերի մեջ: Նա սիրում էր կյանքը, սակայն նրա երկրային կյանքը եղավ ակնթարթ:

Նարեկի «Առաքելություն իմաստության տաճար» գիրքը լույս է տեսել 2005-ին, շատ կուզեի, որ այն հմտորեն թարգմանվեր ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով՝ աշխարհին ներկայացնելու համար հայ հրաշամանուկի եղակիությունը:

Աելիտա Դոլուխանյան
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
25. 11. 2013

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ԻՄԱՍՏՆՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ ԴԵՍՊԱՆՀ

Ավաղ, իմ սկիզբս իմ վախճանս եղավ...
Պետրոս Դուրյան

Յուրաքանչյուր երկնային ճամփորդ ամեն օր ավելի է հեռանում մեզնից՝ մշտապես մնալով որպես բարի խորհուրդ և հիշողություն. որեմն մտապահենք, որ լուցկու հատիկների պես մենք են, մի ակնրարք բոցավազելով, անցնելու ենք հավերժական տիեզերքի հիշողության ծալքերով՝ որպես երկրային ճամփորդներ՝ դառնալով նրա անքաժանելի մասնիկը:

Նարեկ Հովսեփյան

Կան թեմաներ, որոնց մասին առաջինը ես եմ խոսել ԶԼՄ-ներով՝ մեծ պատասխանատվությամբ և համարձակությամբ:

Այս անգամ օգտվել եմ յուրայինների «ծառայությունից»: Նարեկ Հովսեփյանի և նրա «Առաքելություն իմաստնության տաճար» (2005) ժողովածուի մասին պատահաբար իմացել եմ մի բարեկամից, որը նույնքան պատահաբար «Հրապարակ» թերթի 2011 թվականի հունիսի 9-ի համարում կարդացել է երիտասարդ լրագրող Գագիկ Աղբալյանի «Այս է վարքս, և վկայողը դու ես» հոդվածը: Իմ հաջորդ քայլը, բնականաբար, հոդվածագրին փնտրելու նարեկ Հովսեփյանի մասին տեղեկություններ հավաքելն էր: Եվ քանի որ այլևս անկարող էի հեռանալ նարեկից, որոշեցի շարունակել թեման՝ ներկայացնելու համար մի մտածողի, «մեծ կենսափորձով» փելիսոփայի, որն ապրել է ընդամենը 17 տարի... Նրա մտահորիկոնն ինձ շփոթի է մատնել՝ բառիս բուն իմաստով:

Նարեկ Սաշայի Հովսեփյանը (9. 06. 1986–7. 04. 2004) ծնվել է հջեանի շրջանի Սևքար գյուղում (այժմ՝ ՀՀ Տավուշի մարզում): Մեծացել, հասակ է առել ինչպես բոլոր երեխաները.

խաղացել է ու չարաճճիություններ արել, սիրել է հայրենի հողն ու բնությունը, ծառ ու ծաղիկ, կենդանիներ, ամեն ինչից շատ գիրքը՝ դեռ մանկուց: Հեռուստացույցով չի տարվել, իսկ համակարգիչը նրա համար մնացել է չիրագործված երազանք: Ավարտել է գյուղի դպրոցը: Մեծ աշխարհի հետ չի շփվել: Կամեցող ու անչափ ընկերասեր է եղել, մարդամոտ, պատրաստակամ, անկաշառ, անկողմնակալ ու պատվախնդիր, ավանդապաշտ, ավագների նկատմամբ՝ լեռնցուն վայել պատկառանքով: Իր ապրած տարիների ընթացքում հասցրել է երևանը մեկ անգամ տեսնել... 2003-ին ընդունվել է ԵՊՀ իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետը... Զի ավարտել նաև 2004 թվականի ապրիլի 7-ին իր վարած՝ Մայրության և գեղեցկության տոնին նվիրված ցերեկույթը... Գուցե ավարտել է, չգիտեմ... Շնորհավորել է բոլոր աղջիկներին, պարել նրանց հետ, հետո գինի ցողել նրանց վրա՝ ժպտալով շնչարով. «Այս է արյունն իմ»: Ապա նստել է ու գրել իր վերջին՝ «Անսահմանությունը տիեզերքի անցանքս դաշտն է...» արձակ բանաստեղծությունը... Հետո կանգնել է ու արտասանել այն... Իսկ հետո՝... Կրկին նստել է աթոռին, գլուխը քնքչորեն խոնարհել կողքին նստած գեղեցկուհու ուսին և... և... Այդ պահից ի վեր նա հավիտենության գրկում է... Նախօրեին հոր հետ վերջին գրույցի ժամանակ նարեկի՝ «Հայրիկ, ուզում եմ, որ մահին չհավատաս» արտահայտությունը նրա առեղծվածային գոյության երկրային վերջերգի սկիզբն էր... Այդ պահից նա արդեն անմահության ճանապարհին էր...

2011-ին նարեկ Հովսեփյանին հաղորդաշար եմ նվիրել («Վէմ» ռադիոկայան, FM 101,6), նրա անունը հաճախ եմ տալիս եթերից, մեջբերում եմ նրա մտքերից: Բայց սա ամենենին էլ չի նշանակում, թե ինքս ինձ համար ամբողջությամբ բացահայտել եմ նարեկի առեղծվածը՝ նրա սսելիքի բոլոր շերտերը, խորքերը, նրան պաշարած անհանգստությունները, ներսից հոգին կեղեքող ու մաշող մտքերը... Մտալլկում էր դա, թե ճակատագրի (բարձրյալի) չար կատակ, դժվարանում եմ ասել, բայց դաժան իրողություն է, որ նրա սիրու կանգ է առել 18-ը դեռ չբոլորած՝ մտքի թոփչքի պահին: Գուցե թե սա այսօր արդեն անհական թվա, սակայն,

ըստ իս, կարեոր է նրա մտքի տրամաբանական ընթացքին հետեւելու համար, որպեսզի հնարավոր լինի ընկալել նրա մտածումների պատճառահետևանքային կապը:

Նարեկն ունեցել է հետաքրքրությունների անընդգրկելի շրջանակ: Իր ստեղծած (հայտնի չէ՝ որ տարիքում) նշանների համակարգով (դեռևս վերծանված չէ) աշխատություն է գրել մետաղների կարծրությունը մեծացնելու վերաբերյալ: Մի ուսումնասիրություն էլ (անտիպ) նվիրել է ներքին այլման շարժիչների օգտակար գործողության գործակիցը բարձրացնելու խնդրին: Հեղինակ է արձակ բանաստեղծությունների, մաքսիմների, «նոյյան աղավնու վերադարձը» վիպակի:

Նարեկ Հովսեփյանի մտքի մագնիսը բազմաբևեռ է:

Յավոք, նարեկն իր գրառումներում ոչ մի տարեթիվ չի նշել, և, բացի սակավաթիվ «մատնող» մտքերից, հնարավոր չէ պարզապես կռահել, թե որ տարիքում է դրանք գրել, ինչ տրամադրությամբ կամ ինչ ազդակներ են նրան մղել հենց ա՛յդ և ոչ այլ կերպ արտահայտվելու: Գուցե թե դա էլ այնքան կարեոր չէ, որովհետև հանկարծակի՝ ասուպի պես հեռացել է երկրային կյանքից՝ իր իրո՞ք առեղծվածային էության և առաքելության մասին մեզ առաջադրելով բազում «ինչու»-ներ...

Անկախ այն բանից, թե ինչ է գրել նարեկը, ամեն անգամ նրա տողերը կարդալիս մտածում եմ, որ նա իր փոքրիկ ափի մեջ է առել այս հսկա ու մեղսաշատ երկիրը, գուցե թե և ողջ Տիեզերքը, որտեղ այնքան մենակ էր նա ու չհասկացված, այնքան զուլալ ու բյուրեղյա, և այնպիսի՝ հոգսեր էր բարձել իր մատղաշ ուսերին, որոնց ծանրությունը հոգեպես տաժանելի է, ֆիզիկապես՝ անտանելի, իսկ դիմակայության գինը...

Նարեկ Հովսեփյանի գերզգայուն բարոմետրն արձանագրել է ամեն ինչ, անգամ՝ հոգեսոր ոլորտի ելեկջումներ ու վայրիվերումներ, հույզեր ու թրմիոներ, որոնք գիտակցելու համար մահկանացուներս տասնամյակների ճանապարհ ենք անցնում՝ հաճախ այդպես էլ հասու չլինելով դրանց գոյությանը կամ էությանը:

Գրքույկում ներկայացրել եմ վաղամեռիկ հեղինակի մտքերից ու դատողություններից՝ որպես ախտահարված մեր

մշակույթի և ինքնության հզորացման բալասան։ Հայրենիքում արժանապատվորեն ապրելու, օտարի ողորմածությունից չկառչելու, սեփական մշակույթն ու գիտությունը կարեւողելու՝ Նարեկ Հովսեփյան մտածողի հորդորներն առկախված են, իսկ երանելի արքայի՝ Տիգրան Մեծի դասերը յուրացնելու մեր պատրաստակամությունը, դժբախտաբար, դեռշատ է տկար, ճիշտ կլինի ասել՝ անիրականանալի (դատելով մեր այսօրվա կացությունից)...

Նարեկի մասին խոսելիս միշտ չեշտում եմ, որ նրա բազմաթիվ մտքեր ու գաղափարներ մեզ՝ ավագներիս, ծանոթեն, բայց ուշագրավն այն է, թե ինչպես է դրանք զգացել, հասկացել ու սահմանել Նա. զարմանալիորեն հասուն դատողություններով է մեկնաբանում ու վերլուծում ամեն ինչ՝ մեծ մասամբ լուծման ուղիներ առաջարկելով։ Եթե Նարեկը բանաստեղծ լիներ, նրա պատկերավոր մտքերի ցոլարձակումները գուցե թե այսպես չզարմացնեին կամ այսքան չհուզեին ինձ. դա կհամարեի տաղանդավոր պատանու զգացումների ու զգացողությունների ժայթքում։ Բայց Նա պատանեկությանը դեռ վերջնականապես հրաժեշտ չտված մտածող է, փիլիսոփա՝ բարիս դասական իմաստով։

Սա՛ է ինձ համար ամենաարժեքավորը։

Գուցե շատերն իմ գնահատականը համարեն սուբյեկտիվ, չափազանցված։ Քավ լիցի։ Ես խոսում եմ մեր հանրությանն անծանոթ հրաշամաննուկի մասին, որի փոքրածավալ գրավոր ժառանգությունն արժեկորել են Միլվա Կապուտիկյանը և ուրիշներ։ Կարծիքներ են գրել հետմահու հրատարակված նրա «Առաքելություն իմաստնության տաճար» ժողովածուի մասին։ Ողջունելի է մեր մտավորականների վերաբերմունքն այս տակավին անհայտ մտածողի նկատմամբ։ Ողջունելի է, սակայն ո՛չ բավարար։ Նարեկ Հովսեփյանն ազգային հարստություն է, որին հարկավոր է արժանվույնս ներկայացնել ոչ միայն հայ ընթերցողին...

Հասմիկ Գուլակյան

ՆԱԿԴԱՌՆԱՐ ՄՏՔԻ ՏԻՐԱԿԱԼ, ԵԹԵ...

Այս է վարքս և վկայողը դու ես, մարդ, պատս ամուր է և հաստատուն, ինչպես վարքս, և կյանքիս այն մասը, որ տրվել է ինձ ի վերուստ, և կյանքս լույս է, ինչպես շաղախը, որ ոգեղեց է, ու շնորհը զրբերի մեջ է, որ բողնում եմ քեզ:

Նարեկ Հովսեփյան

Նարեկ Հովսեփյանն ապրեց մի ժամանակաշրջանում, երբ նորանկախ մեր հանրապետությունում, մեղմ ասած, կրթությունն ու գիտությունն այնքան էլ հարգի չէին (նրա հասակակիցների մեջ այսօր որոշակի թվով ոչ գրաճանաչ երիտասարդներ կան), իսկ ուսուցիչն իր բարձունքում չէր կամ հավատարիմ չէր իր կոչմանը՝ բառիս և՝ փիլիսոփայական, և՝ ամենասովորական իմաստով։ Նարեկը հանրակրթական դպրոցի դուռը բացեց այն ժամանակ, երբ ՍՍՀՄ-ը նոր էր փլուզվել, և մենք հայտնվել էինք կործանված կայսրության փլատակներում։ Հին դպրոցը քանդվել էր, նորը դեռ չկար (այսօր էլ պարզ չէ՝ ե՞րբ է լինելու, և լինելո՞ւ է արդյոք գիտակրթամշակութային նման քաղաքականության շարունակման դեպքում)։ Կրթության ոլորտը հանձնվել էր բախտախնդիրների... «Նոր փրկիչներն» սկսեցին մինչև հիմքերը կործանել «հին աշխարհը» իրենց նոր «դասագրքերով», ինչպես բազմիցս անվանել ենք դրանք՝ գիրք-տետրակներով։ Կոչումով ուսուցիչներն իրո՞ք շվարել էին՝ կանգնելով փաստի առաջ։ Հրապարակում համբակներն էին՝ դասատուներն ու վարժապետները՝ մանկավարժությունից մղոններով հեռու արարածներ։ Եկ սրանք էին հանրակրթության ոլորտում եղանակ ստեղծողները։

Նարեկը դպրոցում իր առաջին քայլերն ա՛յս մթնոլորտում կատարեց։ Դժվար է ասել, թե այս ամենը ե՛րբ սկսեց զբաղեցնել նրա մատաղ միտքը, ե՛րբ սկսեց խորհրդածել կատարվածի շուրջը և ե՛րբ առաջին գրառումներն արեց դպրոցի

և ուսուցչի, կրթության ու գիտության մասին, բայց այն, ինչ զրեց, ոչ միայն լավ հասկացել էր ու մարսել, այլև, ցավոք, ցմրուր ճաշակել...

Նախ հասկացավ, որ «Դպրոցն ուժի աղբյուր է», իսկ ուսուցիչն առաքելություն ունի այս աշխարհում:

«Տիգրան Մեծն ավելի մեծ կլիներ Ալեքսանդր Մակեդոնացուց, եթե նրա ուսուցիչը լիներ Արիստոտելը:

Գիտությամբ շաղախված քաջությունը հաղթանակների երաշխիքն է»:

«Մի՞թե ուսուցիչ կարող է համարվել նա, ով ազնվորեն կատարում է իր վրա դրված պարտականությունները, և ոչ թե նա, ով սրբորեն կատարում է իր պարտքը աշակերտի հանդեպ»:

Ուսուցչի առաքելությունը գիտակցած պատանու հարցն ամենեին էլ հոետորական չէ: Այսինքն՝ Նարեկն արդեն հասկացել էր, որ դպրոց մտնող որևէ մեկը, որ վերցնում է դասամատյանն ու մտնում այս կամ այն դասարանը, իրավունք չունի ուսուցիչ կոչվելու, եթե չի գիտակցում իր առաքելությունը, այսինքն՝ ուսուցչին վստահվում է մարդու, սերնդի, ազգի, հայրենիքի ճակատագիրը: Եվ Նարեկը, 2011 թվականին ՀՀ դպրոցների տնօրենների պաշտոնների համար հայտարարված մրցույթից շատ առաջ, առաջադրում է այս անչափ կարեւոր խնդրի լուծման իր տարբերակը. «Յուրաքանչյուր ուսումնական տարին սկսելուց առաջ, քննություն հանձնելուց և կարգ ստանալուց հետո միայն ուսուցչին թույլատրել աշխատել դպրոցում»: Հուսանք, որ կզանակ ժամանակի, որ, Նարեկի ասածի պես, ուսուցիչներն էլ կհանձնեն այդ քըննությունը: Այլ հարց, թե այս անգամ ովքե՛ր կլինեն քննողները...

Ինչ պատկերացում է ունեցել առհասարակ Նարեկը հանրակրթական դպրոցի մասին՝ որպես պետության ուազմավարական կարեւորագույն հենակետի, հուշում են նրա մաքսիմները. «Դպրոցը մեր ամրոցն է ու սահմանը, փող տնտեսել՝ թույլ ամրոց ունենալու համար և չպաշտպանված զինվոր ու ժողովուրդ, նշանակում է գիտակցարար ընտրել դավաճանության ուղին»: Կամ՝ «Եթե դպրոցները դարձնենք ուղեղ-

ների ամայացման ու անապատացման գոտիներ, ապա կտանենք երկիրն ամայազուրկ տարածքներ, ուր օտարին առանց ջանադրության կհաջողվի հպատակության մտրակը բանեցնել՝ տաղանդավոր ու արիական հայ ազգը վերածելով բանող անասունների»:

«Գիտությամբ զինված նորագույն զինտեխնիկայի ստեղծումը կապանք է թշնամու ցանկություններին»:

«Մի ճգնեք գիտելիքից մեծամտորեն հրաժարվողին տալ ձեր իմացության ողջ պաշարը»:

Հավանաբար, ինքն ավելի լավ գիտե իր արժեքը»:

«Ճգետ զրուցակից ունենալու դեպքում մեր կյանքը նմանվում է խավարի, իսկ խելացի զրուցակցի դեպքում՝ երանելի լուսաբացի...»:

«Եվ երբ Տերը քառսից ձեռում էր աշխարհը, մի՞թե չարարեց ցերեկներ, քանզի տեսավ, որ լույսն ավելի գեղեցիկ է ու ցանկալի»:

Հետևենք աստվածաշնչյան խորհրդին, նվիրվենք լույսին և ավետենք լույս...»:

«Ուսուցանելով մեր ապագա մասնագետներին և ինքներս ձեռքի տակ ունենալով ուազմագիտական նորագույն նվաճումներ՝ կդասվենք ոչ թե փառասեր ազգերի, այլ պատվարժանների շարքին»:

Նարեկը համոզված գրում է, որ «Մարդկային բանականությամբ ստեղծված ամենահանճարեղ գյուտերից մեկը գիրքն է...»: «Նոր» ժամանակներում, սակայն, գիրքը մի տեսակ հարգի չէ. քիչ են կարդում: Բայց «Մի՞թե գիրքը նման է զորակայանում պատսպարված գեներալի, այլ ոչ թե հասարակ զինվորի, որը պատրաստ է դիմակայելու ու ճակատելու թշնամուն՝ ցանկացած պայմաններում»:

Նարեկն ուզում է՝ «Ապավինենք մանկավարժական ճըշմարիտ գիտելիքներին»: Բայց այստեղ էլ ամեն ինչ շատ հըստակ չէ: Միջնակարգը հայրենի Սեքար գյուղի դպրոցում ավարտած պատանին փիլիսոփայական հասկացությունների սահմաններում տարանջատել է ուսուցիչ-մանկավարժ-դաստու-վարժապետ արտահայտությունները: Ահա նրա մաքսիմներից մեկը, որը գրել է, հավանաբար, 8-րդ դասարանում.

«Ասացիր՝ իբր ուսուցիչ ես դու, քեզ հավատարիմ աշակերտ եղա»:

Ասացիր՝ իբր բազում է հոգսդ, ես որդիաբար քեզ նեցուկ եղա՝ մնալով խոնարհ։

Իսկ երբ իմ մասին հարցում արին, թե ո՞վ եմ կամ ի՞նչ,

Զեռքդ չդողաց՝ ինձ ընդամենը չորս «ընծայեցիր» մեծահոգաբար։

Ուսուցիչ, ասա՛, անունդ ի՞նչ էր»։

Իհարկե, վարժապետ էր նրա անունը, սիրելի Նարեկ, մերօրյա տեր Թողիկ, որ փորձում էր իր ողորմելի գոյությունն ապահովել այդ դպրոցում։ Շեքսպիրի բառերով ասած՝ «մարդը կարող է ժպտալ և սրիկա լինել»։ Դու դասարանում ուղղել էիր նրա սխալները, իսկ նա քեզ չէր ներելու՝ հանունոչ մի բանի...»

«Հավատա՛, խոնարհվի՛ր և երկրպագի՛ր ուսուցիչներիդ, որովհետև նրանք օծված են ի վերուստ...», — գրում է նարեկը և շարունակում։

Հարգի՛ր և սիրի՛ր մանկավարժներիդ, որովհետև նրանք ուղենիշ են կյանքիդ ճանապարհին։

Անաղարտ ու մաքուր պահիր հուշը դասատուներիդ մասին, որովհետև նրանք են քո օրվա խորհուրդը՝ իրենց կարողության չափ։

Եվ եթե կարող ես, իրո՛ք ներիր վարժապետներիդ՝ հանդիպած պահին...».

Աստծու ընձեռած բարել տուր նրանց և անցիր անհիշաչար...»։

Ասածիդ պես այդպես անհիշաչար ու ներողամտորեն դու անցար հատկապես քո մաթեմատիկայի վարժապետի կողքով, բայց նա այնպիսի վիրավորանք էր հասցըել քո գերզգայուն հոգուն, որ Փիզիկապես ի վիճակի չեղար հաղթահարելու այն. ինչպե՞ս կարողացավ այդ փոքրոգի արարքը քեզ այդպես ընկճել։ Կենսափորձդ պակաս էր, արժանապատվությունդ՝ գերադրական աստիճանի, շրջապատդ՝ գրեթե անհաղորդակից քո աշխարհին ու ապրումներին, չարն ու նախանձողները՝ անհամար։ Իսկ ժամանակները՝ պրոֆեսիոնալ տգիտության։ Մեր հանրապետության երկրորդ նախագահը խոստովանում

էր, որ ինքը գիրք չի կարդում, հանրակրթական դպրոցում սկսվել էր բացահայտ գործարք՝ առևտուր, իսկ եթե իրերն անվանենք իրենց անուններով՝ բազար՝ գնահատականի, վկայականի... Անպարկեշտությունն օրինական նորմ էր դարձել և է դպրոցում. հաճախ դասարան են մտնում մարդիկ, որոնք դրա իրավունքը չունեն...

«Հարմար տեղավորվեք և համբերատար եղեք մինչեւ ուշաթափություն, եթե պատրաստվում եք լսել այն ուսուցչին, որը կարծեցյալ գիտուն է...». այսպես մտածողն իրավունք ունե՞ր պարտվելու չարին...

Զարերը կենսունակ են և մարտնչող. անմիջապես գըտնում են իրենց դաշնակիցներին ու բռնցքվում: Այդ մասին էլ ես գրել, բայց ամեն ինչ՝ իր տեղում:

Նարեկն աշխարհ էր եկել այն գիտակցությամբ, որ. «Համաշխարհային մշակույթի գանձարանի տիտանակուու ու ոսկեծույլ դռները մշտապես բաց են ազնվագույն այն մարդկանց համար, որոնց սովորելու ձգտումը նվիրական տեխնանք է, իսկ լույսի ակունքից ըմպելը՝ արժանի պարգև...»: Ցավոք, այդ դռները շատ շուտ փակվեցին նրա առաջ:

Նարեկը հավասարապես սիրում էր թե՛ հումանիտար, թե՛ բնական գիտությունները: Հայոց լեզուն պաշտում էր: «Ազգի բնորոշումն առանց լեզվի նման է անհասցե նամակի», – զրում է՝ ասես պատասխանելով ՀՀ-ում օտարալեզու դպրոցների բացման ջատագովներին և «Լեզվի մասին ՀՀ օրենում փոփոխություններ կատարելու մասին» ազգադավ որոշման համար կյանքի ուղեգիր ստորագրողներին: «Օտարաբանության սիրահարը նման է անձնասպանի, – շարունակում է նարեկը: – Այսօրվա մեր գոյությամբ պարտական ենք խնկաբույր գրաբարին...»: «Հայոց ոսկեղենիկ գրաբարը մարմնացյալ երաժշտություն է, որը հնչել է առ Աստված մեր անձեռակերտ տաճարների լուսեղեն կամարների ներքո՝ որպես լինելության աղոթք և աներկբա հույս»: «Մեր բանակի ամենահզոր դաշնակիցը հայոց լեզուն է»:

«Երկրիս ապագան հայրենիքի գիտական ներուժն ու իմացությունն են», – համոզված է նարեկը:

Բնությունը նրան օժտել էր մի տրամաբանությամբ, որ դուրս էր բոլոր համեմատություններից ու չափումներից: Խորհրդավոր անսահմանություններից սկիզբ առնող նրա միտքը լողում էր կյանքի օվկիանոսում՝ տեսանելիորեն վերհանելով անտեսանելին ու տեսլայինը: Զգիտեմ՝ ո՞ր դասարանում է գրել.

«Բնական գիտությունը հնարավոր այն բանալին է, որով բացվելու է նրա գեղեցկագույն էությունը՝ տարածության և ժամանակի մեջ պատասխանելով բոլոր «ինչուներին»»:

«Արվեստը և գիտությունը միասնական են՝ որպես արմատ և էություն»:

«Մաթեմատիկա չեն սիրում շատերը:

Իզուր:

Տիեզերքն ամբողջովին գաղտնագրված է թվերի մեջ.

Երանի գաղտնազերծողին...

Որովհետեւ ճակատագրի ընտրյալը հենց նա է՝ գաղտնազերծողը...»:

«Սիմպելով՝ շատերը մաթեմատիկան շփոթում են աբսուրդի թատրոնի հետ:

Մինչդեռ, եթե այն թատրոն էլ է, ապա մանրուքների մեջ՝ ճշգրիտ, գործողությունների մեջ՝ տրամաբանված, ժամանակի մեջ ընդհանուր վերլուծական թատրոն է»:

Որ իմաստնության Տաճարից եկած պատանին նախախնամության ընտրյալ էր, երեսում է նրա բազմաթիվ դատողություններում: Նրա մոտավոր հենասյուները թվերն էին. նա միշտ անբաժան էր թվերի աշխարհից.

«Թվերը մեր ուղեկիցներն են.

Հաշվարկները՝ մեր էությունը.

Բուրգերի առկայությունը՝ դրանց վկայությունը...»:

«Մենք ապրում ենք եռաչափ աշխարհում:

Երջանիկ լինելու համար մեզ պակասում է ընդամենը մեկ չափում՝ չորրորդը՝ անհասանելին»:

Նարեկը, կարծում եմ, այդ չորրորդի՝ կատարելության ճանապարհին էր, որը, ըստ իս, ենթադրում էր ինքնաճանաչում, և որի բացահայտումը նրա որոնումների ալֆան ու օմեգան էին, այսինքն՝ ելակետն ու վերջնակետը:

Նարեկի ապրած երկրային կյանքը փնտրումք էր բոլոր առումներով. մե՛կ մտքով պեղում էր դարերը, ինչպես զրաքարի դեպքում էր, մե՛կ ժամանակից առաջ է ընկնում (նա միշտ էլ ժամանակից առաջ էր)՝ մեզ բոլորիս թողնելով հին ու նոր զգացողությունների շփոթի մեջ, մե՛կ ամփոփվում էր սեփական լուսնային մեջ՝ նոր եզրահանգումներ անելու համար.

«Միտք սանձահարող մեխանիկան անհայտ է մարդկությանը», – գըել է:

«Ո՞վ կհամարձակվի վճռականապես հերքել կամ հաստատել, թե մենք բարձրագույն բանականության ձեռքի և մտքի ստեղծագործ կերտվածքը չենք:

Եվ մի՞թե մեր մարդ տեսակին հատուկ կասկածն ու տարակույսը չեն մղի մեզ անառակ որդու պես «այո» կամ «ոչ» ասելու, երբ ոչ թե պատճառը, այլ ընդամենը արդյունքն ենք այդ ամենի»:

Նրա յուրաքանչյուր բառը միշտ պարունակում է ինչ-որ մի բան, դեռևս չասված ինչ-որ միտք.

«Ենշտեյնն իր հարաբերականության տեսությամբ գիտնակա՞ն է արդյոք, թե պայծառատես.

Թե՛ մեկը և թե՛ մյուսը...

Որովհետեւ առանց լավագույն երևակայության պարզապես անմտություն է խոսել գիտության մասին...»:

«Եթե կրկնությունը գիտության մայրն է, ուրեմն ջանադիր լինենք՝ բացահայտվածը բացահայտենք երիցս և քայլ առ քայլ նահանջելով՝ աղաղակենք ոչ մի տեղ չտանող ու չնվաճված մեր առաջընթացի մասին»:

«Կեցցեն գիտությունն ու տեխնիկան: Նրանք սրբնթաց մեզ տանում են դեպի ետ, դեպի մարդկային պատմության ելակետը:

Լինենք բնական՝ բանականորեն...»:

Մեր կյանքում առկա բոլոր հարցերի լուծումը նարեկը փնտրում էր գիտության մեջ ու պայմանավորում գիտության զարգացմամբ՝ մեկ անգամ ևս ապտակելով գիտության ոլորտի այսօրվա պատասխանատուներին, որոնք ամեն ինչ անում են՝ գիտությունը մեր երկրում արմատախիլ անելու և մեզ օ-

տարի սպասարկու դարձնելու համար. «Երկրային գրեթե ցանկացած թնջուկ կարելի է լուծել՝ ելնելով գիտության հինու նոր նվաճումներից...».

Բայց առավել դժվար լուծելի են մարդկային ներքնաշխարհի պրոբլեմները, որոնք անսանելի խորն ու անհասկանալի են, որքան նախաստեղծ տիեզերքն ինքը...»:

Առհասարակ պատանությանը դեռ կարգին հրաժեշտ չտված անձը սովորաբար այլ հայացքով է նայում կյանքին ու աշխարհին, որտեղ առաջնային են սերը, ծնողները, հարազատները, ընկերները, բնությունը, գարունը, ապագայի բերդամրոցները... Որպես այդ սերնդի ներկայացուցիչ՝ Նարեկ Հովսեփյանը, սակայն, հերիաթներով չի լցուել իր օրերը: Նրան մտահոգել են, իր արտահայտությամբ, «մարդկային ներքնաշխարհի պրոբլեմները», որոնց խորությունն ու խորհուրդը համեմատում է «նախաստեղծ տիեզերքի» հետ: Հավանաբար կանխազգալով, որ երկրային կյանքում իր համար նախասահմանված է կարճ ժամանակ, նա շատ առաջ անցավ այդ ժամանակից, փնտրեց մարդու գործունեության օգտակար գործողության գործակիցը և հասկացավ, որ այն «կիսով չափ կախված է նրա ճշմարիտ աշխատափրությունից, կիսով չափ՝ տաղանդից...», և որ «Յուրաքանչյուր մարդու աստվածաշնորհյալ լինելու առասպելն ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում են նրա կատարած գործերի իրական ուսումնասիրությունները»:

Ի՞նչ էր ակնարկում սրանով նարեկը, չգիտեմ, բայց կարծես ուղղորդում է մեզ՝ ուսումնասիրելու ի՞ր գործերի իրական արժեքը: Սակայն դրա համար հարկավոր է լավ իմանալ նրա կյանքի մանրամասները, իրազեկ լինել նրա ապրումներին ու զգացումներին՝ ըմբռնելու համար մաքսիմերի էությունը՝ իրենց ենթաշերտերով: Մինչդեռ թվում է՝ հազիվ երիտասարդության ափ հասած անհատի կենսագրությունը ափիդ մեջ է, ու փորձում ես նրա ապրումների ու հույզերի

մեջ փնտրել դրանք ծնող պատճառները, որը միշտ չէ հայողվում: «Ամենամեծ ցավը հոգու ցավն է, երբ դրսից այն չի երևում անթափանց պատյանի պատճառով, բայց ներսից սպանում է անգիտությունը՝ թափանցիկ», – ապշեցնող հասունությամբ գրել է Նարեկը՝ իրեն բնորոշ դիպուկ վրձնահարվածներով:

Այստեղ է պարագոքսը՝ գիտակցական անասելի կարճ կյանք, բայց մարդու և կյանքի մասին խորհրդածություններ, անդամ՝ գնահատականներ՝ համարձակ ընդգրկումներով:

Մարդու, կյանքի և քաղաքակրթության մասին նարեկը սահմանել է իր բանաձևերը. «Քաղաքակրթություն ստեղծողը մարդ արարածն է:

Քաղաքակրթություն կործանողը նույնպես մարդն է, որքան էլ ամոթ է խոստովանելը»: Նա կասկածի տակ է առնում մարդու ծագման մասին Դարվինի տեսությունը. «Ծերուկ Դարվինի այն տեսակետը, թե մարդն առաջացել է կապիկից, բոլորովին և ոչ մի դեպքում չի կարելի ընդունել...

Սակայն որքան էլ արտառոց և անհարիր է, որոշ վերապահումով կարելի է ընդունել ճիշտ հակառակ տեսակետը...»:

Մարդկային հասարակության մասին նարեկը շատ վաղ սկսեց խորհել: Նախ հասկացավ, որ «Մարդը սխալական է:

Ուրեմն շատ չվստահենք այն գիտությանը, որը շշի հատակին նստած ջին է, իսկ մենք անփութորեն կորցրել ենք խցանը՝ այդ մասին բացարձակապես չմտահոգվելով...», ապա՝ «Մարդու աչքերի, ականջների և բերանի առկայությունը չի նշանակում շատ տեսնել, շատ լսել և շատ խոսել.

Այլ տեսածը դիտարկել և հասկանալ, լսածը տարբերակել՝ վերլուծելով լավ ու վատի, և խոսքը կառուցել ըստ սրանց՝ մարդարիտի պես հազվադեպ հանդիպող, բայց հղկված ու անգին...»: «Մարդու համար իսկությունը, ճըշմարիտն ու հավաստին նրա զգայարաններով ընկալվածներն են: Ես սիրում եմ անհայտի համարձակ հրավերը: Դա յուրաքանչյուրի հնարավորությունների ինքնահաստատման սահմանն է և անհատի իրավունքը...»:

Մարդը, սակայն, դեռ այնքան կատարյալ չէ, որ լիովին ընկալի իրեն շրջապատող աշխարհը, և սովորելու շատ բան ունի. «Աշխարհի անտեսանելի մասը, որը մշտապես մեր անբաժան ուղղեկիցն է, անտեսում ենք՝ երբեք իրավասու չինելով: Սակայն հենց այդ չընկալված մասն է, որ կարող է մեզ անբացատրելիորեն մատնել կործանման կամ դարերի միջով հասցնել բանականության կողմից նշված տիրույթ:

Մեր զգացական աշխարհից դուրս կյանքը առանց մեզ էլ ինքնին գոյություն ունի, իսկ հակառակ տրամաբանելը պարզապես մեր մտածողությանը կդրդի ապավինել ունայնությանը»:

Նարեկը մտորել է նաև մարդու համար նախասահմանված կյանքի տևողության մասին՝ միանդամայն իրական լույսի ներքո: Իր մտածողությանը բնորոշ հստակությամբ բանական էակին նրբորեն հուշում է, որ կյանքը կարճ է, չի կարելի վատնել այդ թանկ ժամանակը, որովհետեւ մարդն առաքելություն ունի. «Մարդկային հասարակության յուրաքանչյուր մեխանիկական ու ֆիզիկական վերարտադրություն անվերապահ կարժանանա կյանքի կողմից դատապարտության, եթե այն, թեկուզ ուշացումով, չտա իր հանճարները...»:

«Մարդուն տրված երկրային ժամանակը խիստ սահմանափակ է:

Օր-ցերեկներն ավելի քիչ են, քան օր-գիշերները:

Գիշերները տարածության և ժամանակի մեջ անսահմանափակ են, անժամկետ...

Արթուն մնանք, որքան հնարավոր է...

Արարենք ցերեկներ՝ հավերժական գիշերվա սահմանը իր տարածքում կարճելու համար»:

Սակայն մի բան է արարելու ցանկությունը, այլ բան՝ դրա հնարավորությունը, որ խորաթափանցորեն նկատել է նա. «Արարի՛ր, եթե կարող ես, մի՛ խանգարիր արարողներին և դու բարի գործ արած կլինես այս դեպքում»:

Նարեկը մարդու մասին երբեմն շատ համարձակ դատողություններ է անում: Օրինակ՝ ըստ նրա՝ մարդը տարբերվում է մյուս արարածներից նախ և առաջ իր առաքե-

լությամբ ու մտավոր կարողություններով. «Ի՞նչ զարմանալի զուգադիպություն. մարդը և անսունը նույն արարչագործության արդյունքն են...»: «Գեղագետ դառնալու համար մարդկային տքնանք և տարիներ են պետք: Ստահակ դառնալու համար կես բուռ հայհոյանքն էլ լիուլի հերիք է»:

Կարդալով նարեկի մաքսիմները՝ այն եզրահանգմանն ես գալիս, որ նա բավարարված չէ մարդու գործունեության արդյունքներով: Այսինքն՝ լավ հասկանալով, թե ֆիզիկական և մտավոր ինչ կարողություններով է օժտված մարդը, նարեկն ուզում է, որ իմաստնության ճանապարհին յուրաքանչյուր ոք դրսեորի առավելագույն խոհեմություն, որովհետև Աստված մարդուն օժտել է ուղեղի ու մտքի շարժիչ ուժով, այսինքն՝ տրամաբանությամբ՝ ուղղորդելով ինքնամաքրման և ինքնակատարելագործման հուն.

«Սայլը մշտապես կմնար մարդկային ամենամեծ գյուտը, եթե մարդու էությունը համակված չլիներ մտքի թռիչքով...»:

«Երազները մեր չիմացության աշխարհի պատգամներն են՝ առաքված մեզ, մինչդեռ մեր մեկնարանման կարողությունն ամփոփվում է օրվա տպագորության շրջանակներում»:

«Երկրային գաղտնիքների բացահայտման բանալին երկրամերձ լեռների անհաս գագաթներից էլ վեր է: Մի՛ խարվեք ու մի՛ տրվեք անդունդների քմայքուտ ու հավերժական կանչին, ուր խավարը ծնում է խավար: Բարձրացեք լեռները, ինչպես ուխտագնացը երկյուղած՝ դեպի ակունքը լույսի, և նրա հրաշագործ ավագանում թաթախեք ձեր հոգին՝ մաքրագործելով»:

Ու թող լույսը լույս ծնի և ցնծա հավիտյանս հավիտենից»:

Բայց միշտ չէ, որ մարդը լույսի ու գիտության պահպան է, իսկ հայացքը՝ լուսեղեն: Լույսը և խավարը նրա համար գույներ չեն, այլ հակադրություն: Հարկ է միայն մարդը կարողանա գիտակցել ու արժեորել տարածության ու ժամանակի իրեն բաժին ընկած հատվածն արժանապատվորեն անց-

նելու բանական էակի առաքինությունն ու բարոյական առաքելությունը...

Նարեկը հավատում է Բարձրյալի՝ միայն մարդուն պարգևած բանականության մեծագործություններին, որը, սակայն, նսեմացնում է մարդն ինքը՝ իր կենսակերպով ու գործունեությամբ. «Իր ծննդյան օրից մարդկությունը համառորեն բախում է տիեզերքի փակ դռները... Սակայն նա՝ Անսահմանի ու ժամանակի տերը, գուցե թե մեր արատավոր էության պատճառով անտարբեր է մեր կանչերին»:

Հավանաբար այսպես մտածելու համար Նարեկը բավարար փորձառություն էր ձեռք բերել: Այս պարագայում էական չէ, թե քանի տարի ես ապրել աշխարհում, այլ՝ ինչպես: Պահի կորուստն անդամ արժեորելով՝ համարում է, որ դա սոսկ պահի կորուստ չէ, այլ դրանով «մեր կյանքի մի ակնթարթը ևս դառնում է ոչինչ»:

«Մի՞թե մարդկային կյանքի իմաստը որոշակի տարիք ապրելն է և ոչ թե որոշակի տարիք իմաստուն ապրելը»: «Յուրաքանչյուր օր նման է հաջորդին, եթե ապրում ես ոչ թե արարելու, այլ ուտելու համար»:

«Ինչպես»-ի և «Հանուն ինչու»-ի հարցերը խոռվել են նրա հոգին, չգիտեմ՝ ո՞ր տարիքից: Եվ դժվարանում եմ ասել՝ մաթեմատիկայի չարաբաստիկ քննությունն էր նրա համար դառնությունների ու տրտմության աղբյուր դարձել, որ գրել է. «Ես ինձ կողոպտված չեմ համարում, որովհետեւ դուք տարաք ամեն ինչ, բացի իմ մտածողությունից», կամ՝ «...իր հաճույքի համար պատահական գնդակ արձակած տգետը ընդհատում է լույսի արագությունը գերազանցող հանճարեղ միտքը», թե՝ նոր ժամանակներում իսկական արժեքների այլասերումն ու բարոյազրկումը. «Հայելին առանց կողմնակալ որոշման ի ցույց է դնում մեր Փիզիկական պատկերը մեզ և ուղիւներին, սակայն հոգու պատկերն աներկայա մեր կատարած գործերն են»:

«Ճվայգի «Մարդկության աստեղային ժամերի» հերոսները հաջողության ջենտլմեններ են, որոնց ճակատագիրը շփացրել է՝ հնարավորինս թույլ տալով ժամանակի՝ իրենց ապրած հատվածը տնօրինել ըստ հայեցողության՝ առանց

Հաշվի առնելու նույն մարդկության ոչ թե կամքը, այլ նաև շահերը»:

Եվ եթե այնպես է պատահում, ըստ մարդու և մարդկայինի մասին Նարեկի պատկերացումների, որ, անկախ ամեն ինչից, մարդն իր արժանի գնահատականը չի ստանում (իսկ դա հաճախ է պատահում, որովհետեւ մեր ժամանակներում մարդիկ իրար ցավ պատճառելու սատանայական ուժով են օժտված. գուցե այդ հատկանիշը բնորոշ է եղել homo sapiens-ին՝ իր ծննդյան արշալույսից). «Ժամանակը մոռացությունից փրկում է միայն նրանց անունները, ովքեր մարդկային պատմությունը իմաստավորում են հենց այդ նույն ժամանակահատվածում»:

«Մեծագործությունն ու դավաճանությունը պատմությունը հիշատակում է անկողմնակալ. առաջին դեպքում՝ օրհնելով, երկրորդ դեպքում՝ անիծելով»: Եվ Նարեկի մի արտահայտություն «շիրմաքար» է դառնում բոլոր հնարավոր և գալիք դավաճանների համար. «Եթե մենք հավերժ մնանք պատմության մեջ, թեկուզ որպես դավադրության զոհեր, և արժանանանք ժողովրդի մեծարանքին՝ կրելով սրբի լուսապսակը, ապա թող ողբա այն դավադիրը, որն ընդմիշտ կրելու է «մատնիչ» եղկելի անունը...»:

Կյանքի մասին իր մաքսիմներում, ըստ իս, Նարեկն առաջնորդվել է «գործն է անմահ»՝ թումանյանի փիլիսոփայական պրիզմայով անցած ժողովրդական իմաստնությամբ: Նրա համար, սակայն, արժեքավորը, վեհագույնը հանուն մարդու արած գործն է. «Ժամանակի մեծ զանգը մեզ ավետում է իր գոյության մասին առ այն, թե մեր վազքի ընթացքում ինչ արժանահիշատակ գործեր ենք հեղինակելու՝ որպես այս աշխարհի անցավոր բնակիչներ»:

Ինչո՞ւ էր Նարեկն այդքան վաղ սկսել խոսել կյանքի անցավորության մասին: Ինչո՞ւ էր այդ տարիքում մտորում կյանքում բարի գործ անելու և պայծառ անուն թողնելու մասին: Դժվար է կանխագուշակություններ անելը:

«Մահվան դեմ խրամատավորվելով ու սվին-սվին դիրքավորվելով՝ անիմաստ գործ կատարած կլինենք:

Մինչ այդ, ժամանակի մեր բաժին հատվածում կատարենք բարի ու գեղեցիկ գործեր՝ ի նշան մեր հաղթանակի և ի հիշատակ մեզ...»:

«Այն բոլոր գործերը, որ մենք կատարում ենք հանուն փառքի, ոչինչ է՝ հանուն մարդկանց կատարած մեր բոլոր գործերից»:

Նարեկն ուզում է, որ մարդն ապրի ժամկետով: Դրա համար շատ բան հարկավոր չէ, պարզապես պետք է լինել մարդ, այսինքն՝ հավատալ մարդուն ու արժանի լինել «մարդ կոչմանը», ինչպես գրել է. **«Եկեք կռվելուց առաջ ի սրտե ժրպտանք իրար»** խոհում: Այստեղ ուզում եմ զեղում կատարել՝ պատմելու համար մի միջադեպի մասին, որ պատմել է Նարեկի՝ Հրաչ անունով համակուրսեցին:

ԵՊՀ մաթեմատիկայի ֆակուլտետի իջևանի մասնաճյուղում հայտնված մի քանի երեանցի ուսանողներ ընդգրծված արհամարհանքով ծաղրում են մայրաքաղաքի սալոնային կյանքից շատ հեռու ուսանողուհիների տեղական բարբառ՝ վիրավորելով նրանց: Նարեկն ասպետաբար հայտնրվում է աղջիկների կողքին և իմաստուն այրի պես ասում այդ տղայիկներին. **«Մի՛ ծաղրեք այն ճշմարտությունը, որը պարզության մեջ ձգտում է կատարյալի, մերժեք պարզամտության գերիշխանությունը, եթե միտումը աղավաղող նպատակն է»**, և ժպիտով հավելում. **«Ոչ ոք իրավունք չունի ծաղրելու անձը, որի տեսակը տարածքի թելադրանքին ներդաշնակ է ու ամբողջական»**:

Սրան հետևում է մայրաքաղաքացիների ըմբոստ մարտահրավերը. **«Եթե ցանկանում ես լսել խոսքերիդ պատասխանը, երեկոյան ութն անց կեսին արի «Քանդակների այգի»: Արի՛, եթե չես վախենում»**:

Նարեկը ոչ միայն չի վախենում, այլև գնում է մենամենակ: Հեռվից տեսնելով հանդուգն տեղացուն, որ հանգիստ, հաստատուն ու անվախ քայլերով մոտենում է նշված վայրին, իրար հերթ չտալով, երեանցի հինգ քաջերը, աքլորանալով ու հոխորտապով, ի լուր նարեկի, բարձրածայն ասում են, թե հիմա այնպիսի դաս են տալու այդ համառ իջևանցուն, որ ընդ-

միշտ դառնա իրենց հլու ենթական՝ չհամարձակվելով այլեւ դուրս գալ իրենց ազգեցության ոլորտից:

Խոստովանության պես պատմել է Հրաչն այս մանրամասները համակուրսեցուն կորցնելուց հետո ասելով, թե իրենք էլ չհասկացան, թե ինչպես է Նարեկն իր հայացքով միանգամից զինաթափել իրենց այնպես, որ շփոթահար և գլուխները կախ սեղմել են նրա աջն ու ամոթահար հեռացել՝ դիտակցելով իրենց արարքի փոքրոգությունը:

Կարծում եմ՝ այս դեպքից հետո է Նարեկը գրել.

«Եկեք կովելուց առաջ ի սրտե ժպտանք իրար,

Եկեք ժպտալուց հետո իրար ձեռք սեղմենք.

Զեռք սեղմելուց հետո մեկընդիշտ հավատանք, որ արժանի ենք մարդ կոչմանը...

Եկեք պարզապես ժպիտով ապրենք...»:

Իսկ ժպիտով ապրել կարողանալու համար կյանքը պետք է դարձնել դրախտ: Նարեկն ունի նաև դրա բանալին. «– Տվեք ինձ հենման կետ, և ես կշրջեմ աշխարհը, – ասում է Արքիմեդը:

Իսկ ես ասում եմ. «Տվեք ինձ հենման կետ, և ձերը կդարձնեմ երկրային դրախտը»...»:

Եվ քանի դեռ նարեկին չի տրվել իր բաղձալի «հենման կետը», անմեղ ցանկություն է հայտնում.

«Համբույրները նման են ծաղիկների...»

Ծաղիկներ ցանեք այտերի վրա, որքան կարող եք,

Ու թող նրանց անուշ բույրը ձեր օրը դարձնի անկրկնելի հեքիաթ՝ լի երջանկությամբ...»:

Սակայն չարի և բարու, ուժեղի և թույլի հավերժական հակամարտության պայմաններում այդ հեքիաթը լոկ երազանք է, որովհետեւ, ինչպես հայտնի ասացվածքն է հուշում. «Ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր». «Արծիվների ու ճուռակների շրջանում, որքան էլ ճնճղուկների ապրելն անսեղի վտանգավոր է, սակայն նույնքան ցանկալի և անհրաժեշտ՝ հենց իրենց՝ ճնճղուկների և, իհարկե, ինչ խոսք, նաև մեղ համար...», – գրում է:

Այս այլաբանության մեջ Նարեկը և՛ թույլի ապրելու իրավունքն է պաշտպանում, և՛ միաժամանակ ընդգծում նրա

գոյության անհրաժեշտությունը՝ որպես կյանքի ներդաշնակությունը պահպանելու պարտադիր նախապայման։ Ավելի առարկայական՝ կարծես ակնարկում է, որ անտառում միայն հսկա և հաստաբուն կաղնիներ չեն աճում, այլ նաև փոքր թիեր ու միամյա բույսեր, որոնք իրենց գոյությամբ պայմանավորում են անտառի՝ որպես հասկացության, բովանդակությունը, այսինքն՝ գոյությունը։ Եվ իսկապես չէ՞ որ անտառի հզոր ու սաղարթախիտ ծառերը բազում առումներով պաշտպանում են փոքրերին և պայմանավորում նրանց կենսական գոյությունը։ Դա լավ է հասկացել նարեկը՝ գրելով. «Կյանքի հրամայականը ոչ միայն մեր Փիզիկական գոյատեսումն է՝ հանուն ապրելու, այլ նաև ուրիշներին ապրեցնելու առաքելությունը՝ ի սեր կյանքի հարատեսության...»։

«Կյանք կոչված խաղի կանոնները բնության պարտադրած նվերն է։ Մնապարձորեն դիմադրած չկանգնենք, այլ խելոք ու խելացի լինելով՝ ընդունենք այն, ինչպես որ կա, որպեսզի ժամանակից շուտ չվտարվենք նրա խաղաղաշտից, այլ մշտապես վայելենք բնության բարեհաճ վերաբերմունքը»։

Այդ կյանքը, սակայն, լի է խոչ ու խութերով, բազում մտացածին և ոչ մտացածին դժվարություններով։

«Կյանքը վազք է՝ արգելապատճենեցներով...»

Ցուրաքանչյուր հաղթահարված արգելքին հաջորդում է ավելի նորը, ավելի դժվարամատչելին...»։

«Ժամանակը հարթում է կյանքի առաջադրած պարզ և բարդ կնճիռները։ Մենք միայն ուղեկիցներ ենք՝ այդ ամենի պասսիվ կամ գործուն տեսքով...»։

Սրան ավելանում է նարեկի հասուն խորհուրդը. ասես կյանքի տեսական ճանապարհ անցած ու իմաստնացած մարդու և ապրած տասնամյակների ընթացքում արած-չարածն ու ձեռքբերումները ծանրութեթև անող նահապետի իրավունքով գրում է. «Կյանքի դժվարություններին խառնեք ձեր հոգու կորովն ու ժպիտը, և դուք կշարունակեք ապրել...»։ Ապրելու և ապրեցնելու ինչպիսի՛ փափագ կա այս խոսքերում, ինչպիսի՛ անսահման բարություն ու մեծահոգություն, որ մեզ՝ ա-

վագներիս այնքա՞ն պակասում է: Եվ ապրելու ինչպիսի՝ տենչ կա Նարեկի խոսքերում՝ անհեթեթության վերածված մեր կյանքի՝ նրա գնահատականներում:

«Բազում են և ուր ասես կարող են տանել կյանքի ճամփաները:

Սակայն նրանցից պետք է փնտրել ու գտնել այն եզակին ու միակը, որ մեր ապրած ու չապրած օրերի անընդմեջ շղթան հասցնելու է անվերադարձ ու արդարացնող տրամաբանական ավարտի...»:

Եվ որքա՞ն բան ունենք սովորելու Նարեկ՝ մտածողից.

«Մի՞թե միայն մահ կոչվող արդարադատ թագավորն է, որ բոլորիս նայում է հավասար իրավունքների տեսանկյունից:

Եվ մի՞թե կյանք կոչվող աբսուրդ խաղացանկը մեզ տանում է դեպի ունայնություն:

Ոգեկոչենք մեր բանականությունն ու բարի գործերը՝ հետ նվաճելով անգոյից քաղաքակրթության չկորսված կը ու վանները, որոնք մեզ իրավունք են վերապահում իմաստավորելու այն ամենը, ինչը խորհրդանշական մի պարզ բառով ընդամենը կոչվում է կյանք...»:

Հենց այդ կյանքում է Նարեկը տեսնում գերագույն հրաշքը՝ նրա շարունակականությունը, հավիտենականությունը: Այստեղ նա դարձյալ առանձնացնում է մարդ էակին տրված ամենամեծ շնորհը՝ բանականությունը. «Բնությունը մեզ կրավորական դեր չհատկացնելով հանդերձ՝ վստահորեն հենց միայն ինքը ստեղծել է այն սերմնահատիկը, որի մեջ իմաստնորեն ամփոփել է մեր բանական շարունակությունը, որը կոչվում է հարատե կյանք»:

Իմացության հաճույքը համեստորեն վայելող, ժամանակավորի ու հավերժի եզրերն իրարից հստակորեն զատած, միտքը՝ անհուններում ու անսահմանության մեջ, ինքը՝ մըշտապես բանականության ու իրականության սահմանում, երկրայիններիս համար որպես կենդանի խորհուրդ, բայց ականջը հավերժ խորհրդավորի կանչին՝ Նարեկ-մտածողը գրել է. «Երկրային մեր ողջ գոյության ընթացքում մեզ անդավաճան, աջակից և աչալուրջ հոգին տրված է որպես մարմ-

նի անդավաճան մաս, իսկ հավերժության սահմանն անցնելուց հետո մեր շահերի իրական ներկայացուցիչ դեսպանը տիեզերաբնակ ոգին է՝ հեռու նյութականից և անվախճան»:

Տիեզերքի և հարատե ու հավերժական կյանքի մասին մաքսիմներում նա հստակորեն սահմանել է ժամանակն ու ժամանակավորը, ժամանակավորն ու մշտնջենականը: Դրանց մասին մարդը դեռ շատ բան չգիտե: Ահա մի կտոր նրա խոչերից. «Տիեզերական տարածության մեջ երկիր մոլորակը մի կանգառ է, ուր ժամանողները չեն ցանկանում ասել, թե իրենք որտեղից են գալիս, իսկ մեկնողները լռում են համառորեն, թե ուր են գնում...»:

Խոսելով կյանքի ու մահվան մասին, Նարեկը՝ որպես երկրային էակ, բնականաբար նախընտրում է կյանքը՝ ժամանակավորը, միաժամանակ հասուն առնականությամբ գիտակցում մահ կոչվող երեսույթի անխուսափելիությունը և իրավունքը.

«Կյանք, թե Մահ.

Իհարկե՝ Կյանք:

Սակայն չմոռանանք, որ վերջին խոսքի իրավունքից օգտվողը միայն մահն է...»:

Կամ՝ «Ժամանակավոր այնպիսի երեսույթ, ինչպիսին կյանքն է, թող մեզ չհասցնի խելահեղ ուրախության, քանզի կա հավերժականը, անվերադարձը...»

Ապավինելով կյանքին՝ տրամաբանություն փնտրենք նաև մահվան մեջ...»:

Նարեկը ոչ միայն տրամաբանություն է փնտրում մահվան մեջ, այլև խոսում է նրա՝ ասես իրեն ծանոթ երեսույթի մասին: Հիշում եմ՝ հոր հետ նրա վերջին խոսակցության հատկապես վերջին բառերը. «Հայրիկ, ուզում եմ քեզ մի բան ասել. ուզում եմ, որ մահին չհավատաս...», և փորձում հասկանալ հետեւյալ մաքսիմը. «Ընդգամենը կույր չկոչվելու համար երբեմն ճակատագիրը, որպես քավության նոխազ, հասարակությունից ի մահ ընտրում է հոգով և մարմնով կատարյալներին...»:

Պատահնու բերանով ասես նախախնամությունն ինքն է խոսում...

Ճակատագրի, հավերժի, տիեզերքի, անսահմանության, կատարյալի թեմաները նարեկին շատ են հրապուրել։ Նա փորձում է անթաքույց հիացմունքով ցույց տալ մարդու մտքի էկոլյուցիան, բայց կանգ է առնում, որովհետև անկատար է մարդը, և դեռ շատ սահմանափակ է նրա մտավոր կարողությունը՝ արարչագործության հարցեր քննելու համար։

«Մարդը տեսնում, ուսումնասիրում է թուչունների ու միջատների թոփչքը և սկսում երազել ինքնաթիռի մասին։

Մարդը մտածելով ստեղծում է ինքնաթիռ մետաղե թրուչունը և սկսում է մտածել տիեզերական սարքերի մասին։

Մարդն ի վերջո ստեղծում է տիեզերանավերը՝ ըստ իր պատկերացումների, և սկսում մտածել անսահման հեռուներն այցելելու մասին։

Սակայն նրա միտքը սուրում-թափառում է անեղը տարածքներում անվերջ և սկսում է զգույշ ու կասկածավոր մտածել արարչագործության մասին։

Եվ, չգիտես ինչու, մարդկային՝ բանական հասարակությունը, վեհին ու կատարյալին ձգտելու փոխարեն, ինքն իր համար ստեղծել է առանձնահատուկ, միայն մարդուն բնորոշ մի ախտ, գիտակցված չարիք գործելու եզակի «տաղանդ» ու անսպառ էներգիա, որոնցից զերծ են կենդանական աշխարհի մյուս ներկայացուցիչները՝ ի պատիվ իրենց։

«Ճշմարիտ հանճարի և տաղանդի կործանման պաճառը հիմնականում երկուսն են։

Եթե նրանք առաջ են ընկել հասարակության և ժամանակի ընթացքից։

Հասարակությունը և ժամանակը չեն ներում նրանց ու կործանում են հենց դրա համար։

Եթե նրանք հետ են ընկել հասարակության և ժամանակի առաջընթացից։

Հասարակությունն ու ժամանակը չեն ներում նրանց և կործանում են հենց դրա համար։

Մնացած բոլոր դեպքերում հասարակությունը և ժամանակը իրենց հետ հավասար քայլողներին մեծարում են՝ կո-

չելով հանճար ու տաղանդ և չեն կործանում հենց դրա համար...»:

Կարծում եմ՝ նույն ժամանակն ու հասարակությունը չներեցին նաև Նարեկին հատկապես առաջին պատճառի համար... Բարեբախտաբար թե գժբախտաբար, թող դա հոգեբաններն ու փիլիսոփաներն ասեն, Նարեկը դա հասկացել էր ամենայն խորությամբ ու լրջությամբ։ Այլապես պատահին այդքան շատ չէր գրի մահվան, իր առաքելության ու վախճանի մասին, որոնք, ի դեպ, ի հայտ են եկել նրա առեղծվածային կյանքի ավարտից հետո միայն։ Մի անգամ հորն ասել է, որ ինքը բանակ է գնալու 2008-ին և ավելացրել. «...բայց եթե գնամ...»։

Անհնար է պարզապես այս ամենին հավատալը, բայց գործ ունենք մի շատ ցավալի, կասեի՝ դաժան հեքիաթի հետ։ Այլապես ինչպես կարելի է բացատրել նրա հետևյալ միտքը. «Ես հյուր եղա այս աշխարհին, ինչպես բոլորը՝ անհրավեր բերելով ցողի պես մաքուր մարմինս և հարուստ էությունս՝ որպես անտեսանելի միկրոաշխարհ՝ նվեր...»։

Սա ավելին է, քան նախազգացումը։ Սա արդե՛ն ավելին է, քան ինքնագիտակցությունը։ Սա է՛լ ավելին է, քան մահկանացուներիս համար սահմանել է բանականությունը... Ո՞վ կկարողանա մեկնաբանել պատանու ապրումներն ու հույզերը, նրան պարուրած մտքերն ու կանխազգացումը գուցե թե վերջին՝ հրաժեշտի այս խոհում։

«Ում ինչ փույժ.

Թե բախտի գիրը, ա՛խ, եղավ անգութ,

Թե ինչ-որ հեռո՛ւ-հեռու տարածքում

Մի աստղ մարեց,

Անշունչ շնչավոր ոչ ոք չիմացավ,

Սակայն տիեզերքը վշտից կարկամեց,

Ցավից համբացավ...»։

Նարեկի այս տողերն ինձ հիշեցնում են նրա հուզարկավորության և հետագա արարողությունների մանրամասները, որոնց մասին պատմել է Հայըր՝ վկայակոչելով բազում ականատեսների զարմանքը... Որքան էլ ուզում ես չտրվել միտիկային, բայց և չես կարողանում անտեսել իրականու-

թյունը և աչք փակել դրա առաջ: Գուցե մենք դեռ անկարող ենք հասկանալու այդ ամենը, դեռ հասուն չենք դրա համար և բավարարվում ենք փիլիսոփայական ինչ-ինչ ուղղություններ, տեսություններ և ուսմունքներ հորինելով, օրինաչափություններ սահմանելով, բայց չենք կարողանում ըմբռնել, բացահայտել, հանրամատչելի ներկայացնել մարդու ապրումները, զգացումները՝ ժամանակի ու տարածության մեջ մեզ բաժին ընկած այն հատվածում, որն անվանում ենք կյանք: Եվ ո՞վ կարող է բացատրել, մեկնաբանել հույզերն ու մտածումները 17-ամյա առաքելությամբ աշխարհ եկած մարդու, որը գրում է. «Ճանապարհը սրընթաց ինձ տանում է լույսի արագությունը բազմիցս գերազանցող մի մղումով, բայց և այնպես, մարդու տեսակի ներկայացուցիչ դեսպանը լինենով՝ ես հազիվ հասցնում եմ հավատո պայմանանշաններ թողնել հավերժ ինձ կանչող անյութ ճանապարհի աջ ու ձախ կողմերին, ոչ թե այն բանի համար, որ չկորցնեմ հետընթաց ճանապարհս վերից վար, որը անհնարին է այլևս, այլ այն բանի համար, որ համարձակորեն ինձ հետեւղները, առանց երկմտանքների ու տառապանքների ճեղքելով Մեծ ձանձրութի անիմաստ դատարկությունը, գտնեն Հույսը, որը բոլոր ցանկացողների համար սիրով բացելու է միակ ճշմարիտ լույսի ճանապարհ»:

Ափսո՞ս, սակայն, որ Նարեկն այդքան շուտ հեռացավ, ըստ իս, «ճշմարիտ լույսի ճանապարհին» չհասած, գուցե և հակառակը՝ հասավ՝ մեզ թողնելով բազում հարցականներ՝ կախման կետերով...

Նարեկ Հովսեփյանին հիշելիս միշտ ասում եմ, որ նա ծնվել էր մի իրականության մեջ, որտեղ խաթարված էին բոլոր արժեհամակարգերը՝ մարդկային, բարոյական, գիտական, մշակութային... իսկ որտեղ նահանջում են քաղաքացիական արժեքները, շղթայական ռեակցիայով աղավաղվում է ամեն ինչ...

Այդ խաթարված իրականության մեջ, բարեբախտաբար, նա ունեցել է իր աշխարհը, որի համար պարտական է նաև իր ծննդավայրին՝ հարազատ Սեքար գյուղին՝ իր շքեղ բնությամբ, և ազնվաբարո այն ընտանիքին, որտեղ ծնվել ու դաստիարակվել է: Մտավորականների՝ արվեստագետների միջավայր, հսկայական գրադարան, կարդալու անհագուրդ սեր, անսահման հետաքրքրամիջություն, ավելացրած՝ աստվածատուր՝ բնատուր տաղանդ՝ բոլոր առումներով: Եվ պատանի նարեկը խորհում ու մտածում է իրեն հուզող ամեն ինչի շուրջ՝ ըստ իր հայեցումների և ընկալումների: Իսկ դրանք շատ հստակ են, գուշակ, դիպուկ ու անվրեալ և, ամենակարեռը, անսպասելի հասուն՝ նրա տարիքի ու կենսափորձի համեմատությամբ: Օրինակ՝ «Դեռևս որոշված չեն մարդկային ստորոտիքյան սահմանները, սակայն ցավալիորեն խիստ սահմանափակ տիրույթներում է գործում ազնվությունը»:

«Արդարությունն ու ազնվությունը մեր օրերում դիմագրկվելով կորավել են՝ դառնալով օրերից մի օր հնագետների կողմից վերահայտնագործվելու աղմկահարույց գտածո՝ ապացույց այն բանի, թե մեզանից առաջ ևս եղել է քաղաքակրթություն...»:

«Այս աշխարհը կործանելու արագ կամ դանդաղագնաբազմաթիվ միջոցներ կան...»

Մարտահրավերներից պատասխանիր միայն նրանց, որոնք պատիվ կրերեն քեզ՝ թե հաղթանակի և թե պարտության դեպքում...»:

Սրանք դժվար երկունքով ծնված մտքեր չեն. բոլոր տողերում դատողություններն այնքան պարզ են, բարոյական գնահատականները՝ այնքան բարձր, որ տեսանելի են դառնում նրա խոհածուփ մտքերի անապական շերտերը.

«Դարերին է հայտնի, որ ոչխարները միշտ էլ գնացել են այծերի հետևից...»

Օ, ինչպիսի երանելի ժամանակներ...

Այսօր այծերն են գնում ոչխարների հետևից...

Օ, ինչպիսի բարոյագուրկ բարքեր...»:

«Ավելի լավ է կյանքում պարզ ու ճշմարիտ լինել ինչ-պես տակառաբնակ մի Դիոքենես, քան լինել պալատներում քծնանքի ու վայելքների մեջ պղծված Մեկենաս...»:

«Սրբություններով կարող է երդվել միայն նա, ով գիտե սրբության գինը»:

«Առատության եղջուրներից օգտվողները միշտ էլ կղանան բաժին հանել նրանց, ովքեր գիշեր ու տիվ անասելի տառապանքով լցնում են հենց այդ նույն առատության եղջուրները...»:

«Բանականության սահմանն անցած յուրաքանչյուր ոք վտանգավոր է հասարակության համար»:

«Անարժանները երջանիկ են՝ չմտածելու ցանկության և ուրիշների հաշվին ապրելու պատճառով, իսկ արժանիները դժբախտ են՝ հենց մարդկայնորեն մտածելու և ուրիշներին անմնացորդ նվիրվելու պատճառով...»:

Նարեկի յուրաքանչյուր տողում առավելապես միտքն է գործում, և ոչ թե զգացմունքը, չնայած տեսնում ենք նաև նրա հոգեոր հենասյուները.

«Վկա լինել չարի ծննդին և չկանխել այն՝ նշանակում է գիտակցաբար մասնակից լինել հետագա բոլոր չարագործություններին, որի համար հետադարձ զղջումը հավասարագոր է անհեթեթության»: Կամ՝ «Թույլ չտանք մուտացիայի ենթարկված արմատի հզորացումը մեր իսկ աչքի առաջ, քանզի նրա պտուղները խորշակող մորեխների նման ավերելու են մեր հրաշակերտ աշխարհը...»:

Իր մաքսիմներում Նարեկ Հովսեփյանն անդրադառնում է նաև հակասություններին, որոնք անբաժան են մեր կյանքից՝ անկախ իրենց տրամաչափերից: Օրինակ՝ հակասություններկու հոգու, այսինքն՝ անձանց միջև, որտեղ օրյեկտը «ես»-ն է:

«Երկու հոգու միջև տարածայնություններն սկսվում են այն պահից, երբ նրանցից մեկի մեջ գլուխ է բարձրացնում եսասիրությունը»:

Նարեկը չի սիրում չնչին մարդկանց, ինքնասիրահարվածներին.

«Երբեմն անիմաստ հպարտության փեշից ամուր կառչածները հայտնվում են եսասիրության թակարդում»:

«Ամենասարսափելին ես-ին ստրկանալն է»:

Բարոյականության դատողությունների ծիրում ուշադրավ են Նարեկի մտորումներն ընկեր-բարեկամների մասին. «Բարեկամները մեզ օգտակար լինելու համար են, ընկերները՝ օգնելու, թշնամիները՝ սթափ պահելու»:

«Ընկեր մի համարիր նրան, ով անընդհատ հիշեցնում է քեզ քո հանդեպ կատարած երբեմնի իր փոքրիկ լավության մասին...»:

«Բարեկամի դիմակ՝ որքան ասես, և, որպես կանոն, բոլորն էլ ժպտագեմ, բոլորն էլ կարեկից»:

Ե՞րբ է նա հասկացել, որ բարեկամն արյամք պարտադրված անձը չէ, կամ էլ բարեկամությունը պայմանավորված չէ սոսկ ազգակցական կապով. սրանց մեջ այնքա՞ն շատ են օտարոտիները կամ, մեղմ ասած, ոչ հարազատները: Իսկական բարեկամին, այսինքն՝ ընկերոջը, ընտրում են: Պարզապես բերում է նրանց բախտը, որոնց արյունակիցներն իրո՞ք ընկեր են ու բարեկամ.

«Յուրային դառնալու օտարների հնարավորությունը նրանց մարդկային չափանիշների և ազնիվ նկարագրի հետևանք է և ոչ թե ապօրինի արնակցական կապերի»:

Սրանց հետևում է ընդամենը 17-ամյա ճանապարհ անցած Նարեկ Հովսեփյանի խոհը, որին ծանոթ են և՛ ընկերների դավաճանությունները, և՛ բարեկամների սաղրանքները, և՛ թշնամական արարքները.

«Բարեկամներին և ընկերներին վստահելով՝ չմոռանանք պահել նաև ճերմակ լաթի մի կտոր բոլոր այն դեպքերի համար, երբ ճակատագրական պահին բարեկամները կհեռանան, իսկ ընկերները կդափաճանեն, և դուք ստիպված կլինեք գնալ ստորացուցիչ բանակցությունների՝ ի շահ ձեր գոյատեման, ինչպես նաև հանուն նախկին բարեկամների դավաճան ընկերների...»:

Նարեկին շատ են հուզել չարի և բարու հավերժական հակամարտությունը, անզիջում պայքարը: Նա փորձում է,

ապավինելով բանականությանը, կանխել մեր միջավայրում չարը, որ չարիք է դառնում բոլորի համար:

«Զարի ու Բարու անզիջում պայքարը երկրի վրա միասնական է ու անվախճան: Սակայն ինչո՞ւ նեղանալ բանականության թողտվությամբ իր կամքին ազատ թողնված մարդուց, որն անվերջ ընդօրինակում ու կրկնում է նրանց և անկանխատեսելի է, ինչպես սանձազերծ վարդող ձին՝ անդունդի եզրին»:

Նարեկին հետաքրքրում է մի երկրնտրանք՝ դիլեմա, որ գոյություն ունի բնության չգրված օրենքով.

«Ո՞վ է ժամանակի հեղինակը.

Զա՞րը, թե՞ Բարին:

Եթե Բարին, ապա մի՞թե ճիշտ չեն այն արդարացումները, թե աներկբա է հնի փոխարինումը նորով, խավարը՝ լույսով, մահը՝ կյանքով:

Իսկ թե Զարն է հեղինակը, ուրեմն հաշտվենք, որ պիտի նորը կործանվի, կյանքն ավարտվի մահով, լույսը՝ խավարով, հույսը՝ անհուսությամբ:

Ահա ձեզ աշխարհ գործուղված անբաժան համահեղինակներ, որոնց գործունեությունը բնության կողմից ընդմիշտ սահմանված օրենք է»:

Նո՞ւյն կերպ են սահմանվել արդյոք մյուս հակադրամիասնության տարրերը՝ պատերազմը և խաղաղությունը, ընդ որում, լույսն ու խաղաղությունը, չարն ու պատերազմը նրա համար նաև հոմանիշներ են: Այսպես՝ «Լույսը խաթարողը բանախոսն է պատերազմի»: «Ովքեր խոնարհվում են պատերազմի Զարին, նրանք դեմ են բանականությանը»: Իսկ «Խաղաղության լեզուն հիմքն է բարեկեցության»: «Երկխոսությունը սկիզբն է խաղաղության»:

«Որպես մահկանացու՝ ես վախենում եմ պատերազմից:

Որպես հայրենիքի զինվոր՝ պատրաստ եմ պատերազմի:

Անմահությունն սկսվում է հայրենիքի սիրուց»:

Խաղաղության և բարեկեցության ձգտող յուրաքանչյուր բանական մարդ քաղաքակրթության մունետիկն է: Խաղաղությունն է առաջին հերթին բարեկեցության երաշխավորը: Խաղաղությունը պետք է պաշտպանել այնպես, որ

առհասարակ արյուն չթափվի: Իսկ թե ինչպես՝ սովորեցնում են նույնիսկ երեխաները.

«Ով չգիտե, որ երեխաները սիրում են կոփվ-կոփվ խաղը, որտեղ զոհերն ու ավերածությունները պայմանական են:

Ով չգիտե, որ մեծերը ևս սիրում են կոփվ-կոփվ խաղը, որտեղ զոհերն ու ավերածությունները պայմանական չեն:

Երանի այն մեծերին, որոնք կընդունեն և կընդօրինակեն կոփվ-կոփվ խաղի փոքրերի տարբերակը»:

Բայց քանի որ մարդն իր բնությամբ արյունուշտ է և անհանդուրժող, նա պետք է ինչ-որ կերպ հագուրդ տա իր վայրենի բնագդներին.

«Պատերազմը նախամարդու ուղեկիցն է, որի ոռւնգերն օդի մեջ որսում են արյան գաղղ՝ հոտը՝ որպես գոյատեման նախապայման: Ի՞նչն է ստիպում իրեն տիեզերքի զարդ համարող այսօրվա մարդուն անցնելու նախամարդու տրորված արահետով՝ ավարառու մի՞տքը, թե՞ արյան ծարավը: Բայց երկրի վրա, ավաղ՝ պակասում են զուլալ աղբյուրները, ու շատացել են նրա ազնիվ ակունքին քար նետողները: Թող նետեն, եթե դա է նրանց նախնիների կանչը: Զէ՞ որ գալու է նաև պատախան տալու ժամանակը՝ անմահության երաշխիքով կամ էլ հավերժ չգոյության դատապարտմամբ»:

«Եթե թշնամուն ուղարկված պատգամաբեր խաղաղության աղավնին դառնում է նրա արյունուշտ ծնոտների ոչ ախորժելի ուստեսող, ապա չերկնչելով՝ ու քաղաքակրթության գեմ չմեղանչելով՝ ինչո՞ւ նրանց հետ չխոսենք մեր լեռների երկնահաս արծիվների լեզվով»:

Ուշագրավ է Նարեկ Հովսեփյանի եզրահանգումը պատերազմների պատճառների պատճառների մասին.

«Գաղտնազերծված բոլոր պատերազմների պատճառը, ի սկզբանե, հացն է...»

Այդ առիթով տեղի ունեցած բոլոր մեծ ու փոքր ճակատամարտերի վերջնական հաղթանակը հացինն է...»:

Եվ ինչպես՝ է բնորոշում պատերազմի հրձիգների քաղաքականությունը. «Այն երկրների ղեկավարները, որոնք պատերազմ են սանձազերծում, նախօրոք դատապաշտպան են վարձում իրենց հայրենասիրությունն ու ժողովրդին...»:

Այնուհետև Նարեկն անցնում է սիրո և կնոջ թեմային։ Այստեղ նույնպես զարմացնում են նրա դատողությունները, գնահատականները, համոզմունքները։ Հպարտ լեռնցին, որ թվում է, թե դեռ նոր պետք է կյանքի դասեր առներ, ինքն է հաճախ դաս տալիս մեզ՝ մնալով իր պատանեկան վեհության, առնական հպարտության, արժանապատիվ պահպաժքի դիտակետում։ Օրինակ՝ «Կյանքի ծանր պամանները կարող են ստիպել և պարտադրել մարդուն հարկադիր մուրացկանության, սակայն ի՞նչը կարող է նրան դրդել՝ մղելով աններելի ու ամոթալի մուրացկանության՝ սիրո հարցում»։

Հասցրե՞լ է արդյոք սիրել Նարեկը, չգիտեմ։ Չնայած հակված եմ այն մտքին, որ նման մեկը եղել է։ Բայց ե՞րբ է ճանաչել իրական կնոջը և «մարմինն ապրանք դարձրած կեղծ դիցուհիներին՝ բարեկիրթ, դատարկ ու մերկ, անզգացմունք դաշտերում սեր վաճառելիս», որ այսպիսի ընդհանրացումներ է անում։

«Երբեմն անձի արտաքին բարեմասնություններին անհատի կողմից հրապուրվածությունը շփոթում են սիրո հետ։

Մինչդեռ սերը երկրպագություն է այն կառույցին, որը հոգու և մարմնի կատարյալ ներդաշնակություն է...»։

Եվ որպես աշխարհի չարն ու բարին հասկացած մարդ՝ Նարեկ-մտածողը խորհուրդ է տալիս։

«Սիրած էակի հետ ապագա կառուցելիս չտրվեք միայն զգացմունքներին։

Մինչ այդ ծանր ու թեթև արեք ամեն ինչ բանականության կշեռքով...»։

«Շինարարական նյութերը բավական չեն օջախ կառուցելու համար, անհրաժեշտ է միաբանություն և սեր»։

Նա գիտե նաև, որ «Հայուհիների հրապույրը նախաստեղծ է»։

Սիրո մասին դատողություններին հետեւում են Նարեկի՝ կին երեսույթի մեկնաբանությունները։ Սա է՛լ ավելի է զարմացնում ընթերցողին, որովհետև նա գրում ու մտածում է կյանք տեսած ու վայելած փորձառու տղամարդու նման։

«Որս գեղեցկության հետևից – այսպես կարելի է բնութագրել կանանց մարմնի և հոգու միացյալ տենչը իրենց երկրային գոյության ընթացքում:

Սակայն ո՞ր իրավունքը նրանց թույլ կտա մոռանալ գեղեցկությունը գնահատողին՝ տղամարդուն, որ, ի հավելումն այս ամենի, կարիք ունի նաև մայրական սիրո, կնոջ հավատարմության և քրոջ քնքանքի»:

«Երկու գեղքում կինը կարող է հայելու դիմաց կանգնել ավելի երկար, քան անհրաժեշտ է:

Առաջին գեղքում՝ հաճույքից, երբ իր հրապույրները գնահատում է ցանկասիրության տեսադաշտում՝ արժանանալու տղամարդու բարեհաճ արժեքավորմանը:

Երկրորդ գեղքում՝ վախից, երբ նա զգուշորեն փորձում է սքողել ժամանակի համառ ձեռքի կատարած ավերածությունները, անցած գնացած օրերի երբեմնի իր մարմնական հրապուրանքը վերադարձնելու անիմաստ փորձ կատարելու համար»:

Պատանի Նարեկը կնոջը գնահատում է նաև գեղագետի տեսանկյունից.

«Կնոջ հմայքի գաղտնիքը նրա երկրաչափական ձևերի պլաստիկ ներդաշնակությունն է՝ հավելած հոգու կերտվածքի առանձնահատուկ կառույցը, որը բնության ամենակարող ձեռքի մենաշնորհ գործն է՝ անպատասխան, անվերադարձ սիրով և ցմրուր նվիրատվությամբ կնոջը»:

Նարեկը երազում էր քաղաքացիական հասարակություն՝ ո՛չ արևմտյան չափանիշներով, որոնք այսօր չառ մողայիկ են և, դեմոկրատիայի անվան տակ, իրենց «ֆրկողակն» են պարտադրում աշխարհին՝ տանկերով, հրթիռներով... Քաղաքացիական հասարակություն Նարեկը ձգտում էր ստեղծել մեր ազգային-պահպանողականության առողջ հենքի՝ վրա, որն ավանդել են մեր իմաստուն նախնիները: Սակայն մենք այնքան ենք հեռացել մեր նախաստեղծ հիմքից, որ դրա մասին գրեթե մեր հիշողությունն ենք կորցրել...

«Երբ ծեծեցին հասարակ մի մարդու աշխարհիս զորավորներն ու տանջեցին ֆիզիկապես, նա լեզուն սեղմեց ատամների տակ ու ձայն չհանեց: Մութ գնդանի մեջ փակեցին նրան և, ուտելու ոչինչ չտալով, փորձեցին ընկճել ոգին, դիմացավ դրանց, բայց երբ մութ գնդանից դուրս հանելով հայՀոյեցին նրա հավատն ու երկիրը, ծեծված ու սովահար մարդը, զորանալով հոգով ու մարմնով, հարձակվեց հայՀոյողների վրա՝ ցըփո բերանները կոծկելու ու փակելու»:

Նարեկ Հովսեփյանն ունի իշխանության և պետության իր իդեալը, որ ներկայացրել է «Նոյյան աղավնու վերադարձ» էսսե-վիպակում: Բայց և հստակ ու հիմնավորված է նրա վերաբերմունքը մերօրյա իշխանությունների ու իշխանավորների նկատմամբ.

«Պետական այն այրերը, որոնք անձնական շահը գերադասում են պետականից, առնվազն ջուր են լցնում թշնամու ջրաղացին...»:

«Կառավարությունները միշտ էլ վարում են այն քաղաքականությունը, որը հակադարձ համեմատական է ժողովուրդների մտածողությանը...»:

«Իշխանությունները մեզ հյուրասիրում են այն ճաշատեսակով, որը հարմար են համարում մեր քիմքին, մինչդեռ մենք պահանջում ենք այն, ինչի համար վճարել ենք նախապես»:

Եվ որպես երկրի արժանապատիվ քաղաքացի, որ պարտականություններ ունի հայրենիքի և պետության առաջ, լավ գիտե նաև իր իրավունքները.

«Մենք Զեզ ոչ թե խնդրում ենք, այլ հրամայում, որովհետև Դուք ընտրված եք և ոչ թե նշանակված»:

«Յուրաքանչյուր իշխանավոր պարտավոր է հաշվետվություն տալ ժողովրդին, և ոչ թե հաշիվ»:

«Իշխանությունն ու ընդդիմությունը նույն գավազանի երկու ծայրերն են: Ինչպես էլ շրջենք այն, նրանք նույն բեեռում երբեք չեն հանդիպի...»:

Իր իսկ դավանած բարոյական չափանիշներով է Նարեկ Հովսեփյանն անդրադառնում հասարակության բևեռացմանը. «Ոչինչ չանելու համար մի մեղադրեք աղքատներին, այլ

դատապարտեք այն շերտերին, որոնք պատասխանատու են Հենց նրանց աղքատության հասցնելու համար...»:

Եվ իր մտածողությանը բնորոշ հակիրճությամբ բանաձևում է.

«Երկրիս փառքն ու իշխանությունը ժողովրդի արյան մեջ նախնիների պահանջն ու կանչն է»:

Նարեկի երազած հասարակության մեջ օրե՛նքը պետք է լինի գերակա. օրենքները երբեք մարդուն «...չեն արգելում ազատ մտածել, սակայն արգելում են ցանկացած մտածած ազատ իրագործել»:

«Օրենքներ ստեղծելով՝ մարդը գիտակցաբար փորձում է սանձահարել իր բնազդային աշխարհի առավել վտանգավոր դրսերումները»:

«Կարգ ու կանոն հաստատելու պատրվակով սեփական ժողովրդի դեմ ձեռք բարձրացնողը ոչ թե օրենքի պահապանն է, այլ օրենքի ստրուկը»:

«Անմեղսունակն էլ կարող է խստագույնս պատժվել ոչ թե մեր սխալական լինելու պատճառով, այլ մեր գերազանցությունը և իշխանությունը ցուցադրելու հետևանքով՝ ի տես և ի խրատ մնացյալ չպատժվածների»:

«Հրամայողի և կատարողի մեջ թշնամանքը դադարեց-նելու միակ միջոցը օրենքի կիրառումն է»:

Սա՛ է օրենքի և օրինականության նրա պատկերացումը:

Իսկ օրենքի իշխանության հաստատումը ոչ միայն բարոյական կուրաձնի երկիրը, այլև կանաչ ճանապարհ կբացի հաղթանակների համար: Եվ պատանի նարեկ-մտածողը հայ-րենասիրությամբ է հերկում մարդու միտքն ու սիրտը, հատկապես՝ հայի, որովհետեւ ամեն ինչ, ըստ նրա, պետք է ծառայի հայի նկարագրի բյուրեղացմանն ու նրա հայրենիքի բար-գավաճմանը: Ահա թե ինչու է գրում. «Հայոց վերածնունդը չարակամ հարևանի մահն է»:

«Անմնացորդ նվիրիր ունեցածդ հայրենիքին ոչ թե նրանից շահ և փառք ակնկալելու, այլ նրա սուրբ հողին ար-ժանանալու հույսով»:

«Այլ երկրներից սահմաններով զատված աշխարհագրական տարածքը չի կարող կոչվել Հայրենիք, եթե նրա վրա ապրողները գուրկ են Հայրենիքի գգացողությունից»:

«Հայոց անմիաբան ձեռքը կարող է բռունցքվել, եթե անգամ իմաստնաբան չենք, բայց մի ենք հոգով ու մարմնով». ինչպիսի պարզ ճշմարտություն: Եվ կոչ է անում չեղծել, չպղծել, անբիծ պահել «ամենասուրբը՝ ողեղենությունը, որն անբաժան է Հայ զինվորից, ինչպես մարմինը՝ ոգուց»:

Հայոց երկիրը, ըստ նրա, չնայած մերձենում է երկնքին, սակայն «Հայոց երկիրը լեռների անհասանելի ծովում ազգակուլ փոթորիկ սրահարումներին դիմագիր նավ է»:

Նարեկի Համար Հայրենիքն անգերազանցելի՝ Հավերժական արժեք է.

«Գահավեժ դարերի մուժում թող անցյալդ, երկի՛ր, և գտիր նավահանգիստդ հուսո, ուր դադար ես առնելու և հանգիստ»:

«Հեյ, Հայոց երկիր, լեռների անհասանելի ծովում ազգակուլ փոթորիկ սրահարումներին դիմագիր նավ: Քարեղեն կողերիդ զարկված, ջարդված ու նահանջ-նահանջ իրենց ելակետը վերադարձող քոչվոր ալիքների հիշողությամբ դեռ անցնելիք ճանապարհու Հավերժ է», որովհետև «ոգիդ դեռ կենդանի է»:

«Հենիր գլուխդ հոգնած մայր հողի կարոտից պապակված ափերին ու զորացիր կրկին՝ Հավատալով երթիդ»:

Նա ցավում է, իհարկե, որ տևականորեն անհաջողություններն են մեզ ուղեկից եղել՝ մեր փառավոր անցյալի մասին սոսկ հուշեր փոխանցելով մեզ.

«Դանդաղ-դանդաղ, փշուր-փշուր, անեզր աշխարհներդ փակ տարածքներ դարձան՝ կոչվելով շրջան, ուր պտտվեցինք խաղ-կարուսելի պես՝ տարիներ շարունակ ինքներս մեր հետեւից հասնելու փորձ անելով ու դոփեցինք տեղում, մինչդեռ ուրիշները քայլում էին արագընթաց, իսկ հետո սկսեցին վարգել քառատրոփ»:

«Հայի վերջին խելքի մասին առասպելը հովություն, թե միսիթարանք է ժամանակների փորձությունները դիմագրաված մեր միամիտ սրտերի Համար՝ թե ճակատագրի անվերջանալի

Հարվածներից վերջիվերջո խելքի ենք եկել ու հասկացել, որ էլ նահանջ չկա՝ ոչ երգով, ոչ առանց երգի։ Ու հիմա հիշողությունը՝ կենդանի ու պերճախոս, վկայում է, իրոք, մեր վերջին հնարավորության մասին։ Վերջին։ Վերջի՞ն, թե դեռ կա հնարավորություն՝ դեգերելու վերջի և սկզբի միջև։ Մի՞թե սա չէր մեր կործանումների պատճառը։ Մի՞թե թըշնամի օտարը և օտար բարեկամը ենթագիտակցորեն ավելի շուտ չեն ըմբռնել այս իրողությունը մեր թուլության մասին»։

Նարեկին անասելի ցավ է պատճառում մեզ համար ազգային հատկանիշ դարձած խեղճուկրակությունը։ Հայկ նահապետի ու Տիգրան Մեծի զարմից սերած նարեկ Հովսեփյանը պատվախնդիր որդու իրավունքով խնդրում ու պահանջում է. «Տառապանքների բովով անցած իմ հրաշալի ժողովուրդ, ափդ մի՛ պարզիր օտարին՝ մի քանի սենթ կամ մի քանի սու մուրալու համար։ Վերագտի՛ր նախաստեղծ քո ոգին։ Հանուն ստամոքսի մի՛ դարձիր գործակալ կրկին, մի՛ խաչիր քո Քրիստոսին երեսուն արծաթով, որ քո երկիրն է՝ բարձրյալից պարզ արված ընդմիշտ քեզ»։

Այս յուրօրինակ, ինքնատիպ Փոքրիկ հշխանի շատրվանող մտքերը, նրա բյուրեղյա մտորումների տարափը, լուսեղեն և առաքինի ներկայությունը, որ մշտապես զգում եմ նրա դիմանկարից, հատկապես թախծոտ, բայց անասելիորեն խոսուն հայացքին հանդիպելիս և այգաբացի առաջին աստղի պես ջինջ ու գեղեցիկ նրա էությունը գննելիս, ինձ տանում են ուրի՛շ մի աշխարհ։ Այնտեղ բարոյականության ու բանականության կողմնորոշչչը նարեկ-երեսույթն է, և իմ այս Փոքրիկ հշխանի անընդգրկելի մոլորակում այլ կերպ եմ զգում տիեզերքի անսահմանությունը, որտեղ աստղաբույլեր է ցանել նարեկ Հովսեփյանը՝ որպես սուրբ ծաղիկներ։ Այդ աշխարհի մասին է նարեկի հետեյալ արծակ բանաստեղծությունը, որը գրել է երկնային ճամփորդ դառնալուց անմիջապես առաջ։

«Անսահմանությունը տիեզերքի անցանքս դաշտն է,
ուր աստղերը նրա հուր ծաղիկներն են։
Երազանքի դաշտը երկնքի սահմանն է,

ուր թուշունները նրա թև ծաղիկներն են:
Ծովերի դաշտը ջրերի խաղն է,
ուր ձկները նրա լուռ ծաղիկներն են:
Երկիրը դրախտ կորուսյալ պատրանքների դաշտն է,
ուր մարդկիկ նրա գույգ ծաղիկներն են:
Մոռացությունը մահվան լուռության դաշտն է,
ուր հիշողությունը նրա սուրբ ծաղիկներն են»:

7. 04. 2004

Նարեկի մտքերը՝ որպես «սուրբ ծաղիկներ», անմահական բույրով են լցնում մեր էությունը՝ մարդու, մարդկայինի և բարոյականության մասին իրենց գերազնիվ խոհերով ու իմաստնությամբ:

Նարեկ Հովսեփյանը ծնվել է, որպեսզի իր թերևս կարճ, բայց լուսեղեն գոյությունը մեզ համար դարձնի հավերժական՝ անընդհատ հուշելով, որ «լույսի գոյության մասին իմացողը չի կարող մնալ խավարում, եթե անգամ նա ի ծնե կույր է»: Նա ծնվել է, որպեսզի բացառի հուսահատությունն ու պարտվողականությունը մեր մեջ և նահանջի բոլոր տրամադրությունները՝ երգով թե առանց երգի: Նա ծնվել է ինքնամաքրման մեր ճանապարհին անմար կերոն դառնալու և բարոյականության դասագրքերը մեր սեղաններին միշտ բաց պահելու համար: Նա ծնվել է ազգային ու ոգեղեն ճգնաժամից դուրս գալու իրական ելքի ուղիներ նշելու մեզ համար հատկապես ծրագրային գործով՝ որպես ձիթենու դալար շիվ՝ վերադարձող աղավնու կտցին: Նա ծնվել է, որպեսզի հիշեցնի մեզ իմաստնության տաճարի ճանապարհը: Նա ծնվել է, որպեսզի իրենով ապրեցնի մեզ՝ իր առեղծվածային էության մասին մեզ առաջադրելով բազում անհայտներով հավասարումներ... Դրանցից մեկը փորձելու եմ այսօր «լուծել» սուրբյեկտիվորեն, որովհետեւ այլ ելք չունեմ: Խոսքն այն մասին է, թե ո՞ր տարիքում է գրել իր «Նոյյան աղավնու վերադարձը» ուտոպիական էսսե-վիպակը. ի դեպ, սա իմ՝ բոլոր ստանդարտներից դուրս բնորոշումն է. այդպիսին է նաև հեղինակն

ինքը: Հակված եմ կարծելու, որ գրել է 14 տարեկանում, որովհետև այդ տարիքին է նաև էսսե-վիպակի հերոսը՝ Նարեկ Ա անզուգական արքան...

Այն, ինչ գրել է Նարեկ Հովսեփյանն այդ գործում, շատերիս համար գուցե նորություն չէ: Պարզապես ցնցում-ապշեցնում են պատանու տրամաբանված, կուռ, հայեցակարգային անխոցելի մտածողությունը և չափազանց հակիրճ ափորիզմները՝ բանաձևված արտահայտություններն ազգի, հայրենիքի ու պետության և նրանց ապագայի մասին:

Վիպակում գործողություններն սկսվում են Հայաստան աշխարհի մանկահասակ արքայի՝ Նարեկ Ա-ի օծման արարողության պահից: 14-ամյա պատանուն այդ թեկնածության համար պատրաստել են հայության ու Հայոց հայրենիքի թշնամիները՝ խոշոր տերությունները՝ ի տես նորբարելունիայի աշխարհակալ ղեկավարի և մյուսների: Հատկապես նորբարելոնիայի ղեկավարը կարծես թե գոհ է իր գործակալական ցանցի աշխատանքի արդյունքից. Հայաստան աշխարհը կարողացել են քայլայել այնպես, որ անհուսության են մատնել երկրի քաղաքական կուսակցություններին ու նրանց մեծամիտ առաջնորդներին... Հայաստանում նրանք ստեղծել են լրտեսական այնպիսի սարդոստայն, որ ամեն ինչ տեսնում են ասես ափի մեջ: Նորբարելոնիայի տիրակալը հոգնել է իր կոկորդում չոր հացի պես խրված այս քարքարոս երկրից. Նրա անհնազանդ ու պահանջատեր քաղաքացիներն անկանխատեսելի վարք ու կեցվածք ունեն և միշտ խառնում են իր հաշիվները: Եվ, ահա, իր գործակալական ցանցի անվրեպ ջանքերով կարողացել է կոտրել այս երկրի բնակիչների քաղաքական ողին. քայլայել է տնտեսությունն ու առողջ քաղաքական դաշտը, իշխանատենչներին հանել իրար դեմ՝ պաշտոններ և այլ խոստումներ տալով, գժտեցրել դաշնակից գործիչներին, անասելի չափերի կաշառքներով բարոյագրել նախագահի աթոռի հավակնորդներին, որի հետևանքով մրցակից չունեցող 14-ամյա պատանուն ներկայացրել են որպես միակ հնարավոր թեկնածուի՝ նախապես պայմանավորելով երբեմնի փառապանծ Հայաստան աշխարհի անվերապահ ու վերջնական գաղութացման հարցի շուրջը: Երկ-

րի անվտանգության ուժերն այլևս վստահելի չեն, և հանգիստ ու անարգել կարելի է ապագա մանկահասակ արքային անջրպետել ժողովրդից:

Նորբարելոնիայի տիրակալի կարծիքով՝ այստեղ տեղի էր ունենալու հավուր պատշաճի մի արարողակարգ, որից հետո Հայոց արքային նրանք խաղացնելու էին՝ ըստ իրենց սցենարի:

Ակսվում է օծման արարողությունը: Բազմությունն օղակել է տաճարը: Տաճար տանող ճանապարհը բաց է: Տաճարի մուտքը նույզես բաց է: Գալիս է նաև մանկահասակ արքան:

Այսպես է նկարագրում նրա մուտքը Նարեկ Հովսեփյանը. «Եկողը սասնա ծուռ չէր, ժայռեղեն ու քարեղեն չէր, այլ փոքրամարմին, նիհար, բաց ճակատով, պարզ հայացքով պատանի էր ու նման չէր, հաստատ նման չէր տեր ու տիրակալի:

Բայց չէ, քայլքը հաստատ է դնում, որովհետեւ զգում է իր հողի շուռնչը, նիհար է ու ձիգ, ասես աղեղ է, պիրկ՝ պատրաստ նետահարելու չարակամին, ձեռքերը բռունցքված են, ուրեմն՝ ամուր է կամոք, հայացքը լուսեղեն է, ուրեմն՝ պահապան է լույսի ու գիտության:

Ժողովուրդը տեսավ, հասկացավ, ջերմացավ հոգով ու ներքին մի մղումով հարցրեց ու ընկրկեց՝ ճանապարհ բացելով առաքվածին»:

Բոլորը ոտքի են կանգնում: Կաթողիկոսը, որ ոսկեկուռ խաչը գլխից վեր էր բռնել, ընդառաջ է գալիս Հայոց պատանի արքային, ծնկի գալիս նրա առաջ՝ ի տես և ի լուր բոլորի հայտարարելով, որ պետականության գաղափարը վեր է ամեն ինչից: Վեհափառը ներկայացնում է նորընտիր արքային և ասում, որ նա «Աստվածաշունչ մատյանի և բոլոր պատվարժաններիդ ներկայությամբ հավատարմության երդում կտա՝ մասն կազմելով երկրիս օրենքներին և ընդունված կարգին...»:

Ահա այստեղ է, որ երկրի ապագա ղեկավարը խառնում է բոլորի խաղաթղթերը՝ ասելով. «Ազատանի աշխարհիս, տիկնայք փափկասունք, ցանկությունս է՝ երդվել Աստվածա-

շնչի, Խորենացու «Հայոց պատմության» և Նարեկացու «Ողբերգության մատյանի» վրա միաժամանակ»:

Շփոթահար կաթողիկոսը լուռ համաձայնություն է տալիս, և դիվանապետի կարգադրությամբ ներկայացվում են նշված մասունք-սրբությունները:

«Ժողովուրդ Հայոց և երկրիս հոգեոր տեր,— ասում է պատանի արքան,— ցանկությունս նաև այս է՝ երդումիս պահին ձեռքիս ունենալ Հայոց քաջաց քաջերից մեկի սուրբ՝ ի տես Համայն աշխարհի, որպես խաղաղության խորհրդանիշ, ի տես ու խորհուրդ թշնամյաց, որպես ավետումի և պաշտպանության գործիք: Վստահիր ինձ, նախաստեղծ ժողովուրդ Հայոց, քանի դեռ թագավորդ ես եմ»:

Մինչ օտարերկրյա հյուր ազատանին շունչը պահած սպասում էր, թե ինչպես կարծագանքեն այդ ամենին Ծիկավարսների խորամանկ տիրակալն ու նորբարեկոնացի աշխարհակալը, Հայոց պատանի թագավորը, առանց ավելորդ պաթոսի, սակայն հանդիսավոր և վճռական տոնով շարունակում է իր երդումը սուրբ մասունքներով, աջ ձեռքում՝ Վարդան գորավարի սուրբ:

«...Եվ ես՝ Նարեկ I թագավորս, ի շահ հայ ժողովրդի և ի լուր աշխարհի չորս ծագերի, Հայտարարում եմ վստահաբար, որ առաքելությունս լինելու է Աստծո օգնությամբ ինձ ընձեռված անսահմանափակ իշխանությունը գործի դնել՝ որդեգրելով խաղաղ քաղաքականություն՝ դրսում, իսկ երկրի ներսում լինել երաշխավորը և պահապանը ժողովրդական արժեքների...»:

Հանդիսության առաջին իսկ պահից Նորբարեկոնիայի աշխարհակործան տիրակալը հասկանում է, որ տանուլ է տվել. իզուր էին կորսվել և՝ ժամանակը, և՝ նյութական ահռելի միջոցները, որ չի խուսափելու ամոթից ու խայտառակությունից: Իրենց ջանքերով իշխանության եկածը հանկարծ դրժում է հնազանդության և կամակատարության բոլոր պայմանավորվածությունները, խառնում աշխարհաքաղաքական դաշտի խաղաթղթերը՝ հաստատակամորեն հոչակելով իրեն թագավոր ու տեր խաչմերուկ այս երկրին՝ Նարեկ Ա. արքա... «Այս ամենը չի բխում իմ և իմ երկրի շահերից, պա-

տանի»,- հետո ոռնալու պես մոլտալու էր նորբաբելոնացին...

Արարողության մասնակից օտարերկրյա մեծ ու փոքր տրամաչափերի գործիչները հասկանում են, որ ընթացքն այլ ևս անշրջելի է, իսկ ճշմարտությունը՝ ակնհայտ, և մտածում են պատանուն դաս տալու մասին...

Նարեկ Ա արքան եկավ իշխանության, երբ անորոշությունը թակում էր Հայաստան աշխարհի գուռը...

Հետագա շարադրանքում հեղինակը ներկայացնում է այն ծրագրերը, որոնց իրագործմամբ պետք է ոտքի կանգնի կործանման եղրին հասած երկիրը: Արքան նախ ձերբակալում է կառավարության նախագահին, որը զեկավարվում էր «որքան՝ վատ, այնքան՝ լավ» քաջածանոթ կարգախոսով, և նրա ապիկար ու հանցակից վարչախմբին: Կառավարման միասնական կամքի անհրաժեշտությամբ է նարեկ Ա-ն առաջին հերթին բացատրում արդեն նախկին կառավարության կալանումը.

«Պետությունը մի ամբողջություն է, որը կազմված է բազմաթիվ եսերից և կոչվում է մենք, իսկ եթե մենքը պատկերացնենք բռունցքի տեսքով, որի յուրաքանչյուր մատ-մասնակիցը, ունենալով իր դերն ու նշանակությունը, չի կատարում ճակատագրով իրեն վստահված առաքելությունը, ապա կիսատ-պուատ ամբողջությունը մի՞թե կարող է լինել լիարժեք: Չունենալ պետական մտածողությամբ կառավարություն՝ նշանակում է գիտակցաբար գնալ կործանմանն ընդառաջ...»

Մեր ոգին ամփոփված է արժանապատիվ այն հատերի մեջ, որոնք ժամանակի հետ անողոք ճակատամարտում շահել են հաղթողի դափնին՝ դառնալով ընտրյալ, և անհատ բանականության սահմանների այս և հակադիր կողմերում: Մեր ժողովուրդն իր կենսունակությունն ու արիությունը իր սուրբ լեռան զուլալությամբ շաղախված պարզ միամտությունը հավաքել պատվաստել է իր արմատն ու էությունը ներկայացնող Սասնա ծոերին: Զմոռանանք երթեք: Եթե թլու Դավիթը մեր արկածախնդիր ու կենսատու ոգու ապացույցն է, ապա մի՞թե մեր իմաստնության ամփոփումը Փոքր Մհերը

չէ: Կոչենք Մհերին: Դուրս գանք մեր տառապանքների Ագռավաքարից և մեր լեռների բարձունքներից ձայն տանք ու խնդրենք որդիաբար.

— Դու հոգնել ես, հող: Պատմությունն ու ժամանակը չեն ներել քո նախաստեղծ առաջնայնությունը, և հուսալքված էլ չես կարող պահել մեզ քո կենսատու կրծքի վրա: Հե՛յ-Հե՛յ, Փոքր Մհեր, դուրս արի քեզ կաղապարող սահման քարայրից, ասա՝ Հե՛յ վախ իմ անտեր աշխարհ, ասա, ու մեր բոլորի ոգին տար ու գումարիր մեր ցասումների թուր կայծակին, փշրիր փակ ու կապան: Քո մեջ ամփոփվածներս տեր պիտի լինենք մայր Հողին՝ դիմադարձ կանգնելով ժամանակի փորձություններին ու արհավիրքներին: Ստեղծենք Դավթի երիտասարդության և Փոքր Մհերի իմաստնության ներդաշնակություն, և ապագան մերը կլինի...»:

Անուրանալի է այս տողերի հեղինակի առնականությունը, արժանապատվության բարձր զգացումը, հայրենանվիրությունը, ու շատ կուզենայի, որ նախ և առաջ նման հատկանիշներ դաստիարակի իր սաների մեջ հայկական հանրակրթական դպրոցը: Այսպես՝ նորընծա արքան հայտարարում է, որ երկրի կառավարումն այսուհետ հանձնվում է թագավորին՝ ցմահ ու ժառանգաբար, սակայն նա հաշվետու և ենթակա է սահմանադրությանը ու էլ առավել՝ իր խոճին: Թագավորի գերագույն նպատակն իր հպատակների համար ապահով և արժանապատիվ երկիր ստեղծելն է՝ բարելոյնյան այդ խառնիճաղանջից անփորձանք ու անվնաս հանելուց հետո:

«Անպատիվ ու անարգված երկիրը չի կարող գոյատել, մարմնապես ու նյութապես բարձր չի լինի մուրացիկից: Երկրիս փառքն ու հեղինակությունը թագավորի արյան մեջ նախնիների պահանջն ու կանչն է: Իր անցյալը չհիշողը չի կարող կերտել իր ապագան: Ապագան որդիների ժամանակն է և պատկանում է նրանց: Ճիշտ խնամված ծառի պտուղներն ախորժելի են տեսքով և ախորժելի են քիմքին: Ճշմարիտ և ճիշտ թող լինեն որդիները: Այլժամ հուսալի կլինի երկրի կառավարումը նրանց օրոք: Ինչպես բնության, այնպես էլ մարդու շարունակությունն ու անմահությունն էդ ու արու

տեսակների մեջ է, նրանց արյան ծալքերում՝ ժառանգականության գաղտնիքներով։ Փոխանցենք առողջ գեներ ժառանգներին, ինչպես մեզ ավետում են աստվածաշնչյան հրաշք պատվիրանները։ Տան գործերի կառավարը միշտ եղել է կինը։ Վստահենք Տուն-Երկիրը կնոջը՝ նրան մասնակից դարձնելով կառավարմանն ու իշխանությանը։ Մի վախեցեք, երբ ցեղի արուների բացակայության դեպքում թագուհի Հոչակիվի կինը։ Նա մայրաբար հավաքելու է իր զավակներին շուրջը՝ հոգածությամբ ու խրատքով… Զլինենք անառակ որդի, չլքենք մայր հայրենիքը՝ հանուն սեփական որկրամոլության և ստոր կրքերի։ Թագավորը կամ թագուհին կարող են կրել նաև արքայից արքա կամ Մայր թագուհի տիտղոսները, եթե նրանց օրոք կատարվել են իրադարձություններ, որոնք նպաստ են բերել պետությանը։ Բոլոր ուժային կառույցներ ենթակա են նրանց և ուղղորդվում են նրանց կողմից։ Թագավորը միշտ կրելու է զինվորական հասարակ համազգեստ, բացի առանձնահատուկ դեպքերից, այն է՝ արտերկրյա այցելություններ և դեսպանների ընդունելություններ՝ ներսում։ Թագուհին կրելու է համեստ, բայց նրա իշխանությունն ու գեղեցկությունն ընդգծող հագուստներ…»։

Նարեկ Ա-ն հրավիրում է նոր Գերագույն խորհուրդ, նշանակում նոր վարչապետ, հաստատում կառավարության նոր կազմ, որտեղ ընդգրկված էին իրենց բնագավառների երևելի մասնագետներ։

Իսկ թշնամիները, բնականաբար, քնած չէին։ Նրանք որոգայթներ էին լարում Հայոց պատանի արքայի դեմ՝ շարունակ որոճալով նրան պատմելու իրենց նենդ որոշումը։ Շրջափակում, պաշարում են Հայաստանի սահմաններն իրենց անթիվ-անհամար զորքերով։ Ծանր վիճակ է ստեղծվում երկրի համար։ Այդ օրհասական պահին արքան իր խոհեմությամբ ու համեստությամբ կարողանում է միավորել ներքին բոլոր ուժերը, անգամ՝ կենտրոնախույսներին, ստեղծել հայրենասիրական ճակատ՝ լավ հասկանալով, որ՝

«Միանձնյա երկիր ղեկավարողը նման է օվկիանոսում միայնակ նավ վարողին։ Դիմադիր լինենք փոթորիկներին

միասին: Մեզ բաժին հանած պատմության գորդյան հանգույցը լուծենք միասնաբար:

Հայրենիքի շահը պահանջում է առժամանակ չհակվել դեպի փակուղի տանող ճանապարհ: Մեր երկրի ճակատագիրն ինքներս կերտենք ներսում՝ հեռու պատեհապաշտությունից, և նախապատվությունը տանք իրապատում գործերին: Մեզ առաջարկած հրապուրիչ օտարերկրյա տեսիլքները վերադարձնենք նվիրատուներին՝ առանց տոկոսների և շնորհակալությամբ:

Մեր գործերը թող խոսեն մեր մասին, և ոչ թե մեր բերանները՝ մեր գործերի մասին, ներումն հայցենք բոլոր նրանցից, ում անձի և անվան հանդեպ մեծամտությունն է ստիպել խոսել, և ոչ թե բանականությունը: Զերծ լինենք գեղծարարությունից, և մաքուր ճշմարտությունը թող ընտրյալների չափանիշներով արդարադատ լինի մեր հանդեպ»:

Նարեկ Ա-ի վարքագիծը փորձառու շատ այրերի ստիպում է հարգանքով լցվել նորընտիր արքայի նկատմամբ: Ներքին հաշտությունը, որ այնքան կենսական էր, այլևս իրողություն էր: Հայոց անմիաբան ձեռքը բռնցքվում էր...

Երիտասարդ թագավորի գլխավորությամբ նոր կառավարությունն ստեղծում է Հայրենասիրական ճակատ՝ որպես երդվալ նվիրյալների խումբ-ամբողջություն, որի գերադույն նպատակը հայրենիքի փրկության ուղիները գտնելն էր և իր ազգն աշխարհում մրցունակ դարձնելը:

Երանելի վիճակ...

Եվ արքան անցնում է իր բարեփոխումների ծրագրերին:

Առաջին կարևորագույններից մեկը վերաբերում էր մեր սրբություն սրբոցին՝ դպրոցին: Նա փորձում էր օր առաջ լուծել այս հարցը, քանզի դեռ թարմ էին այն փորձություն-դըժբախտությունները, որոնց հետևանքով «դպրոցները դարձել էին ուղեղների ամայացման ու անապատացման գոտիներ»՝ երկիրը վերածելով ապագայագուրկ տարածքների, որտեղ յուրաքանչյուր օտար, առանց ջանադրության, կկարողանար «հպատակության մտրակը բանեցնել՝ տաղանդավոր ու արիական հայ ազգը վերածելով բանող անսառւների»:

Կրթության և գիտության նախարարը ցուցադրաբար փորձում է սովետառությամբ և անհեթեթ հիմնավորումներով շփոթեցնել Նարեկ Ա-ին՝ ասելով՝

– Բյուջեի հարստացման լավագույն ուղիներից մեկը դպրոցի վրա անիմաստ ծախսերի կրճատումն է։ Աղքատ ու փոքր երկրի համար, ինչպիսին որ մենք ենք, համընդհանուր ուսուցումը համարում եմ անիմաստ և ավելորդ շքեղություն։ Տաղանդավորները, եթե իհարկե կան այդպիսիք, հնարավորության դեպքում թող իրենց ուսումը շարունակեն արտերկրում, իսկ ազատված դրամական միջոցները, արքա, կարող եք ծախսել ըստ ձեր հայեցողության։

Ի պատասխան՝ արքան ներկայացնում է բարեփոխումների իրատեսական մի ծրագիր, որը կարելի է դնել այսօրվա մեր դպրոցաշինության հիմքում։

«Երկրիս ապագան հայրենիքի գիտական ներուժն ու իմացությունն են։ Դպրոցն այդ ուժի աղբյուրն է։ Եթե փակենք դեպի մեզ առաքված ակունքը, ապա կթուլանա ու կամայանա՝ աշխարհի ստեղծումից ի վեր մեզ պարգև հասած մի բուռ քարաստան Հայաստանը։»

Դպրոցը մեր ամրոցն է ու սահմանը, փող տնտեսել թույլ ամրոց ունենալու համար և չպաշտպանված զինվոր ու ժողովուրդ, նշանակում է գիտակցարար ընտրել դավաճանության ուղին...»

Նա իր համաձայնությունը հայտնեց 10-ամյա ուսուցման ծրագրին, սակայն միաժամանակ կատարեց մի շարք լրացումներ։

1. Հստակ դարձնել ուսուցման ծրագրերը,
2. Հանել անիմաստ ճառախոսությունները,
 - անհարկի դատողությունները,
 - անիմաստ երկարաբանությունները,
 - խճողված մտքերը,
 - կրկնությունները,
 - բերանացի պահանջվող երկարաշունչ մտավարժանքները։

Ուսուցման վերջին երկու տարիները հատկացնել մասնագիտական կողմնորոշմանը և բուհական քննությունների նախապատրաստմանը:

Տաղանդավոր երեխաներին ապահովել թոշակով՝ որպես երկրի ապագա նվիրյալների:

Սահմանել ուսուցչական կոչումներ և կարգեր:

Վարժապետ-դաստիարակ՝ նախադպրոցական կրթական հիմնարկների մակարդակով:

Դասատուներ՝ ցածր դասարանների համար:

Մանկավարժներ՝ միջին դպրոցի համար:

Ուսուցիչներ՝ բարձր դասարանների համար:

Ցուրաքանչյուր ուսումնական տարին սկսվելուց առաջ քննություն հանձնելուց և կարգ ստանալուց հետո միայն ուսուցչին թույլատրել աշխատելու դպրոցում:

Պետական հատուկ որակավորման հանձնաժողովների կողմից ընդունված, կրթական և ուսուցման համալիր ծրագրի պարտադիր կատարումը տնօրենների կողմից իրավունք կապահովի նրանց պաշտոնավարել դպրոցում մեկ տարի ժամկետով՝ այդ թվում հաշվի առնելով նաև նույն աշխատանքային միջավայրի ուսուցիչ-մանկավարժների անհատական կարծիքը:

Բավարար առաջադիմություն չցուցաբերող ուսուցիչներն ու մանկավարժները կաստիճանազգրկվեն միչև վարժապետություն:

Դպրոցաշինությանն ու ուսուցմանը հատկացվելիք գումարը պետք է մոտ լինի ռազմական ծախսերին»:

Հատկապես վերջին միտքը մեկ անգամ ևս ուզում եմ կրկնել՝ ի լուր ՀՀ պետական այրերի. «Դպրոցաշինությանն ու ուսուցմանը հատկացվելիք գումարը պետք է մոտ լինի ռազմական ծախսերին»:

Ուշագրավ է նարեկ Ա-ի վերաբերմունքն արտաքին գործերի գերատեսչության գործունեության նկատմամբ: «Պետությունը կարիք ունի պետական մտածողությամբ այրերի» կարգախոսով առաջնորդվող արքային գարմացնում է այդ նախարարությունում ստեղծված անառողջ մինուլորար ընդունել են սնամեջ օրենքներ, լուրջ հարցերով զբաղվելու

փոխարեն լրտեսում են միմյանց, մեծամիտ են և սնապարծ, որոնց բառ-կրակոցները վերածվել են բառ-փոխհրաժգությունների...

— Ես կարծում եմ,— անկեղծորեն ասում է թագավորն արտաքին գործերի արդեն նախկին քարտուղար Հանձնակատարին,— որ սեփական մեղքի գիտակցումը ձեզ թույլ կտա հրաժարվել մի պաշտոնից, որը ձեր ղերակատարմամբ արտգործնախարարությունը դարձրել է թատրոն, իսկ նրա գործունեությունը՝ մեկ մասնակցով ներկայացում՝ հավելելով՝ հաջողությունը թող ուղեկից լինի ոչ թե անձնամեծարին, այլ պետության նվիրյալին...

Ծանր վիճակում էր մեծաց դասերին միշտ ունկնդիր պատանի թագավորը: «Պատմությունից հայտնի հայ զինվորի առասպելական փառքը խամրել, հավասարվել էր զրոյի»: Եվ, թվում էր, այլևս անդառնալի անցյալում են մեր հերոսական անցյալը, «դարերի ամենակուլ արգելքները խորտակած ժողովրդի, նրա քաջարի զինվոր-զավակների կամքն ու կորովը»: Հարկավոր էր անվերջանալի անկումներից ու պարտություններից անցնել քաջագործությունների ու հաղթանակների ուղի: Ստեղծված կացությունը պահանջում էր դիմագրավել այն ուժերին, որոնց համար հայոց վերածնունդը մահ էր:

Պաշտպանության և հակադարձման ծեր նախարարը՝ ուազմի գործերի մեջ պատահական մի այր, զեկուցում է, որ, ըստ օտար տերությունների հետ կնքված գերշահավետ ուազմական պայմանագրերի, մեր երիտասարդ սպայական կազմը կմարզվի և կսովորի բարեկամ երկրներից որևէ մեկի ուազմական տարբեր հանդրվաններում: Նա ապշեցուցիչ հաջողություն է համարում հատկապես այն, որ մեր ուազմական հետագա ծրագրերը մշակել են այլ տերությունների համապատասխան գերատեսչություններ, որի համար ծախսվել է պաշտպանության համար հատկացված բյուջեի ուղիղ կեսը, իսկ մյուս կեսի հաշվին նախարարը խոստանում է Շիկավարսներից կամ նորբերոնիայից ձեռք բերել ուազմական տեխնիկա՝ համարելով այն մեր ազատության նախապայմանը...

Այս տողերը գրելիս գիտե՞ր արդյոք պատանի Նարեկը, որ «մոտ տասը տարի շարունակ ՆԱՏՕ-ի համագործակցությունը Հայաստանի հետ համագրել է իզմիրում տեղակայված ՆԱՏՕ-ի Եվրոպայում դաշնակցային ռազմավարական հրամանատարության Հարավ-արևելք միացյալ հրամանատարությունը, որի անձնակազմի 70–80 տոկոսը թուրք զինծառայողներ են: Ավելին, ՆԱՏՕ-ում գործող Գործընկերության համագրման կենտրոնում Հայաստանի հետ համագործակցության սպայի պաշտոնը մշտապես տրվում է Թուրքիայի ներկայացուցիչներին, Թուրքիան ակտիվ մասնակցություն է ունենում Հայաստանին վերաբերող բոլոր քննարկումներում և նրա ոչ հայանպաստ, չհիմնավորված կարծիքը, մասնավորապես հայ-թուրքական և հայ-ադրբեյջանական հարաբերությունների վերաբերյալ, շատ դեպքերում անքննադատաբար հաշվի է առնվում ՆԱՏՕ-ի մյուս անդամների կողմից ու պարտադրվում ընդունվող փաստաթղթերում»¹: Այս ամենը՝ 2007 թվականի տվյալներով:

Նարեկ Ա. արքան հասկանում է, որ հանդիպել է «տկարամտության անբնածին պատճենների», եթե լսում է մեղալներով ու շքանշաններով զարդարված ապաշնորհների կոհորտայի անդամներին, որոնք լիաբերան հավանություն են տալիս պաշտպանության և հակադարձման ծեր նախարարի բարբաջանքներին, «քանզի այդ ամենի մեջ տեսնում էին բանակի հաշվին իրենց հետագա բարգավաճումը և բարեկեցության երաշխիքը»: Եվ ներկայացնում է իր հերթական՝ բանակի վերափոխման ծրագիրը:

«Ազատության գաղափարն անցնում է ժողովրդի ֆիզիկական գոյության և հոգևոր էության շարունակական ճանապարհով՝ մինչև վերջնակետ ու հանգրվան: Արհեստածին ազատությունը չպատվաստենք մեր կենաց ծառին և խուսափենք այլածին պատուների վայելքից: Հրաժարվենք այլոց՝ մեզ բաժին հանած ազատությունից, որը դառնալու է սկիզբը

1. Արմեն Այվագյան, Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը Հայկական հարցի համատեքստում, 2007, էջ 9:

մեր անկումների և ստրկության: Ազատության գրավականը մեր միասնության և հզորության մեջ է: Այս ամենն ապացուցենք գործով և ոչ ճառասացությամբ...

Մի՞թե մեզ հետ չեն մեծն Տիգրանի, քաջն Վարդանի, անկասելի Անդրանիկի և բազում այլ քաջերի լուսեղեն ոգիները: Դադարել ենք հայ լինելուց, թե՞ մոռացել ենք արիական մեր ծագումն ու փառապանծ Մասիսների խորհուրդը: Ըմպենք Կաթնաղբյուրի կենսատու ուժի ակունքներից՝ գորովագութ ու կորովի Դավթի նման: Սրբենք սրբացած հայոց դաշտ ու լեռները պղծողներից և հպարտ կանգնենք Աստծուց մեզ շնորհված քարաշխարհին՝ որպես անպարտելի արծիվներ, և փառքն ինքը կփնտրի մեզ:

— Ոչ ասենք մետաղատար ռազմամթերքին՝ իր բոլոր տարատեսակներով:

— Ոչ ասենք փափկասուն տիկնանց վայել, օտարերկրյա շքեղ ինքնաշարժերով բարձրաստիճան զինվորականների ցուցադրաբար ու աննպատակ թրեելը մայրաքաղաքի փողոցներում:

— Ոչ ասենք ճոխ առանձնատների փափուկ բազկաթոռներում քնելու համար զինվորական բարձրագույն աստիճաններ շնորհելուն:

— Ոչ ասենք այն զորապետներին, որոնց քաջությունը սահմանափակվում է գիշերային ակումբների մեղկ գեղեցկուհիներին նվաճելով:

— Այո ասենք գիտությամբ զինված նորագույն զինտեխնիկայի ստեղծմանը:

— Այո ասենք պճնանքներից զուրկ դաշտային համազգեստով զորապետներին, նրանց չոր, անհարմարավետ կյանքին:

— Այո ասենք ռազմական բոլոր հաստատություններին: Ուսուցանենք մեր ապագա մասնագետներին՝ ինքներս ձեռքի տակ ունենալով ռազմագիտական նորագույն նվաճումներ:

— Այո ասենք զինվորական կոչումների վերանայմանը:

— Այո ասենք բոլոր այն զորապետներին, որոնք ինքնակամ կմեկնեն սահմանամերձ տարածքներ ու կրացա-

Հայտեն իրենց ռազմական տաղանդը՝ դառնալով զինվորների պատկերացումների հերոսը:

— Մայրաքաղաքում թույլատրել մնալու միայն Գլխավոր շտաբին և նրա գործունեությունն իրականացնող աչքի ընկած զինվորականներին:

— Ստեղծել ռազմական քարտուղարություն՝ մշտապես տեսչական այցեր իրականացնելու նպատակով»:

Ռազմական բարեփոխումների ծրագիրը պաշտպանության և հակադարձման նախարարին ներկայացնելուց հետո արքան մտորում, մտածում էր երկրի ապագա կառուցվածքի մասին:

Նա Հայոց երկիրը պատկերացնում էր որպես միասնական մի մեծ ընտանիք, որի չափահաս անդամներն ունեն սեփական նախասիրություններ ու գաղափարներ, սակայն ընդունում և առաջնորդվում են միասնական այն ծրագրերով, որոնք ընդունել և հաստատել է ընտանեկան խորուհրդը, և որոնք արժանացել են ընտանիքի հոր հավանությանը: Եվ սկզբում է մտորել հայ ժողովրդի անցած ճանապարհի մասին՝ վստահ, որ «դեռ անցնելիք ճանապարհը հավերժ է»: Անհանգրվան հեղեղի պես եկան օտարները գումարան, պատուհաս որպես, բզիտելով երկրի անեզր աշխարհները, փշուր-փշուր արեցին դրանք, դարձրին փակ տարածքներ՝ անվանելով շըրջան:

Հայրենիքի մասին խոհերն ու մտածումները ճակատագրի պես անբաժան էին արքայի էությունից, ուժ ու զորություն էին տալիս նրա նիհար ու վտիտ մարմնին:

«Երկիր, ո՞ւր են աշխարհներդ ծովից ծով, ասա:

Որտե՞ղ են, ո՞ւր են նրա ծառա տերերը՝ իրենց աշխարհներին՝ բերդ, երկիր միջնաբերդին՝ թև ու թիկունք, արքային՝ նեցուկ, ժողովրդին հավատարիմ՝ մշտապես ծառա և խոնարհ կատարող:

Թող այսուհետեւ մարզերդ անվանվեն աշխարհներ, իսկ մարզպետները՝ արքայի տեղապահներ:

Թող հազարների միջից ընտրվեն նրանք, որ նվիրյալ են երկրին ու ժողովրդին, թագավորին ու հայրենիքին, քաջ են ու մեծագույն հայրենասեր:

Թող նրանց բազկի գորությունը լինի անկասելի, միտքը՝ տիեզերագնա, ուազմական գիտելիքները՝ անսպառ...

Թող արժանիներն ու բանիմացները, գիտուններն ու նվիրյալները, ուազմասերներն ու քաջաբազուկներն առաջնորդեն համայնքները թագավորի նշանակմամբ:

Թող վերապահվի մենաշնորհը հայոց գյուղերին՝ տնօրինելու մայր հողն ու ակունքները ջրերի, կապիտալը շրջանառու և պայմանագրերի կնքումը դրսի ու ներսի ընկերությունների հետ՝ ի շահ համայնքի՝ պետության հովանավորությամբ և հսկողությամբ:

Թող բարեկարգ համայնքներն իրենց բարեկեցությամբ նեցուկ լինեն երկրին և ոչ թե պահանջատեր:

Թող ամեն մեկը երկնքի արքայության մասին մտածելուց առաջ իր ոտքերի տակ հենարան ունենա այն, ինչ մեզ տրված է ֆիզիկապես և կոչվում է հող:

Թող այս հողի վրա մեր ներկայությունը լինի մշտապես ցանկալի և արդարացված և ոչ թե հավերժ սպասում՝ անառակ որդիների վերադարձին:

Թող զուգակցենք հողը գիտության հետ և տեղաշարժենք բոլոր ուղղություններով՝ թե՛ հորիզոնական, թե՛ ուղղաձիգ հարթություններով:

Թող ուժեղ համայնքները պետության ուժի երաշխիքը լինեն:

Անմնացորդ նվիրիր ունեցածդ հայրենիքին ոչ թե նրանից շահ և փառք ակնկալելու, այլ նրա սուրբ հողին արժանանալու հույսով։ Այլ երկրներից սահմաններով զատված աշխարհագրական տարածքը չի կարող կոչվել հայրենիք, եթե նրա վրա ապրողները զուրկ են հայրենիքի զգացողությունից»։

Ուազմական բարեփոխումների ծրագրից հետո արքան ներկայացնում է նույնական ծրագրի մշակույթի համար՝ հատուկ ընդգծելով հայոց լեզվի դերն ու նշանակությունը՝ որպես ազգային ինքնության անփոխարինելի և անսակարկելի գրավական։ Եվ սա գրել է 14-ամյա պատանին՝ 2010-ի «Լեզվի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների մասին» օրենքի ազգադավ նախագծի ընդունումից շատ առաջ...

«Մեր բանակի ամենահզոր դաշնակիցը հայոց լեզուն է:
Ազգի բնորոշումն առանց լեզվի նման է անհասցե նա-
մակի:

Ինչպես որ յուրաքանչյուր համեղ կերակրատեսակ
պարտական է համեմունքների առկայությանը, այնպես էլ
յուրաքանչյուր լեզու պարտական է իր հարուստ նրբերանգ-
ներին:

Գրաբարը նման է այն թագավորին, որը մահվանից ա-
ռաջ ավանդել է իր հաջորդին ամուր և հզոր երկիր:

Օտարաբանության սիրահարը նման է անձնասպանի:

Կիրթ երևալու ամենաանիմաստ ջանքը խոսակցական
լեզուն օտարաբանություններով շաղախելն է:

Մեր գոյության ապացույցը մեր մարմնի առկայու-
թյունն է, իսկ մեր հոգու առկայության մասին վկայում է
լեզվամտածողությունը:

Մեզ մատուցվող բարոյագուրկ Փիլմերը նման են այն
մրգերին, որոնք արտաքուստ քաղցր և ախորժելի են, իսկ
ներքուստ՝ դառն ու լեղի:

Ընդունենք օտարների մշակույթը վերլուծաբար, ընտ-
րենք հատիկը և դեն նետենք հարդը:

Հեռուստատեսությունն ազգային է ոչ թե անվամբ, այլ
էությամբ:

Հեռուստատեսության ներկա նպատակը գլոբալացումն
է, իսկ գլոբալացման նպատակը՝ ազգերի և ազգայինի
վերացումը:

Գեղարվեստական Փիլմերից դիտենք այն, ինչը չի ոտ-
նահարում մարդու արժանապատվությունը, իսկ այս չա-
փանիշներին չհամապատասխանողները ցուցադրենք կենդա-
նիներին»:

Այստեղ ուզում եմ հակադրվել մեր սիրելի Նարեկ Հով-
սեփյանին՝ ասելով՝ չարժե, որ այդ Փիլմերը ցուցադրեն կեն-
դանիշներին. չի կարելի աղարտել նրանց մաքրամաքուր ընու-
թյունը, անիմաստ է նաև էլեկտրարէներգիայի ավելորդ ծախ-
սը: Թող այդ աղբը ցուցադրեն միայն նկարահանողների ըն-
տանիքներում՝ կազմակերպելով Փիլմի «նեղ դիտումներ»...

Արքայի մշակութային ծրագիրն անհնար կլիներ պատկերացնել առանց կրթության և ուսուցչի դերի արժեորման։ Քանի որ Նարեկ Ա-ն ինքն էլ էր ծարավի ուսման (նրա կը թությունը կիսատ է մնացել), խնդրում է, որ իր կրթության հարցով զբաղվի երկու մասնագետ՝ հումանիտար և բնական գիտությունների գծով։ Նա, որ երկու ոլորտում էլ փայլուն ընդունակություններ ուներ, շատ անհաջողակ էր ուսուցիչների հարցում։ Երկուսից և ո՛չ մեկն իր գիտելիքներով վարժապետից այն կողմ չէր անցնում։ Նրանցից և ո՛չ մեկը գաղափար չուներ ազգային մշակութից։ Իսկ Նարեկ Ա-ի համար ազգայինը միշտ ելակետ էր՝ համաշխարհային քաղաքակրթության ճանապարհին, և առիթը բաց չի թողնում ի լուր երկրի նախարարությունների ամենու։

«Մեր հայրենի տան հիմքն անսասան դարձնելու համար նրա շաղախին խառնենք ազգային ծեսերն ու սովորույթները։

Նախահայրերը երկիրն ի պահ հանձնել են մեզ։ Լինենք պատասխանատու ապագա սերունդների առաջ։

Երկիրը պետք է միշտ շնչի և թևակորվի նորովի՝ չմոռանալով, սակայն, հետադարձ հայացք ձգել իր պատմությանն ու անցյալին։

Հայրենիքը պատմականորեն ձևավորված իր դեմքն ունի։ Զաղավաղենք օտար ազգերի առաջ նրա կերպարը։

Նրա դարավոր կնճիռների իմաստնացած խորքում թաքնված մտածումները պեղենք ու մեկնաբանենք համամարդկային արժեքների չափանիշներին համապատասխան, որովհետև մենք էլ մեր արժանի տեղն ունենք այս արևի տակ։

Մենք հին ենք, բայց ոչ հնացած։

Դարերի փորձով կուտակված իմաստնությունն ամբարվել է մեր գենային ֆոնդերի մեջ՝ զտելով այն խառնակ արյունը, որ տարածաշրջանի խաչմերուկներով անցնող վայրենին պարտադրել է մեզ՝ դրանով իսկ փորձելով խաթարել մեր անաղարտությունը, պարտադրել ավարառուի իր փորձն ու էությունը։ Բայց հզոր մեր կամքը ծառացել է օտար կանչերի դեմ՝ խորտակելով կապ ու կապանք և, զուլալվելով,

շարժվել է առաջ դեպի իր երկնահաս լեռների բարձունքները, ուր արևածագները ծիրանափայլ են, և ապրելու հույսը՝ անհատնում, ինչպես մեր հոգին, մեր արմատն ու էությունը...

Անցյալ չունեցող յուրաքանչյուր ժողովուրդ չունի ապագա, իսկ ապագա չունեցող ժողովուրդը դատապարտված է չգոյության...

Ազգային դիմագիծ չունեցող երկիրը նման է նկարի, որի շրջանակը սև է, կտավը՝ բորբոսնած, նկարիչը՝ մուրացիկ...

Զաղավաղենք Աստծուց պարգև ստացած մեր դիմագիծը՝ ջրի հայելուն նետած օտարի պատահական քարից, դեմ լինենք խավարին մեկընդմիշտ՝ դիմադարձ կանգնելով չարիքին ու բռնությանը, սատարենք բռնավոր դարձած ազգերին ու հաստատենք հավասարների երկիր՝ ի վերուստ բանականությամբ պարգևատրված մոլորակի վրա, ազգերի ինքնորոշումը միակ ճիշտ ճանապարհն է, որ շարժվում է լույսին ընդառաջ։ Թող լույս իշնի Հայոց սուրբ հողի վրա, ուր դեռ հայուհիների՝ հրապույրը նախաստեղծ է, և եվրոպայի հրամայականը՝ անբնական խառնագույգությամբ պիղծ և արգահատելի»։

Ո՞վ կհամարձակվի ասելու, թե այս ծրագիրն ազգային մշակույթի զարգացման ուղենիշը չէ, որի մասին խոսում ենք հատկապես անկախությունից ի վեր...

Ազգային արմատների ու դիմագիծի պահպանումը արքան առաջին հերթին կարևորում է քաղաքական նկատառումներով՝ դրսեորելով հասուն այրի խորիմաստություն և փորձառություն։

«Հենվել սեփական ձեռնափայտին և ոչ պատահական անցորդի, որը, միենույն է, ճանապարհի ինչ-որ հատվածում լքելու է անկասկած, լինենք ճկուն ու պինդ, բայց ոչ պնդաճակատ ու ճկվող, լինենք ճիշտ, բայց ոչ ճշտանման, լինենք նպատակաւաց՝ հանուն երկրի, և լինենք խոսքաշեն ու ոսկեբերան՝ մեր կառուցողական միտքը տանելով ընդդեմ քաղաքական դաշտի խարդավանքների։ Փոքր ազգ լինելով՝ մեզ չշփոթենք փոքրավորի հետ, նրանց խաղին մասնակից չլինենք՝ որպես շախմատի հասարակ զինվոր, ու չգլխատվենք հենց այնպես՝ ի շահ օտարի։ Տնային վերլուծության ենթարկենք ինքներս մեր խաղը, զուգորդենք այն քաղաքական

Հոտառության հետ: Եթե ժամանակը դատապարտել ու վտարել է մեզ պատմության հրապարակից, չներելով անցյալի մեր հապաղումներն ու սխալները, իմաստուն չլինենք միթե: Զէ՞ որ եկել է քարեր հավաքելու ժամանակը...

Հակադրենք պարզ մեծամասնությանը մեր խելոք գլուխները՝ ճակատամարտը շահելով ոչ թե թվով, այլ էությամբ: Դաշնակցի երկդիմի խաղը մեզ տանելու է երկու ճակատով կովող պետության կարգավիճակի: Ուշիմ և հնագանդ աշակերտից վերաճենք բանիմաց ուսուցչի: Տանք պատմության դասաժամին առաջին դասը մեր կեղծ բարեկամին և բացահայտ թշնամուն»:

Նարեկ Ա. արքան լավ էր հասկանում, որ թշնամի տերությունները կկորցնեն իրենց հանդիսատը՝ տեսնելով, թե ազգային և մշակութային ինչ զարգացումներ են տեղի ունենում Հայաստանում: Եվ նա չէր սխալվում: Շուտով նրանք որոշում են պատժել հանդուգն արքային և կործանարար ուժերով ներխուժում են Հայոց երկիր՝ մտածելով փոշիացնել ամեն ինչ և մեկընդմիշտ: Նրանց, սակայն, չեն դիմագրավում բանակն ու աշխարհազորը:

«Հայոց լեռներն առան մարտահրավերը, ձայն տվին իրար, եկան հավաքվեցին ու երկնահաս գագաթները գլուխ գլխի շունչ քաշեցին մի պահ, ու հանկարծահաս որոտները փեղկահան արեցին երկնքի դարպասները, խորտակեցին հայոց հավաքական մտքի կապանքված արգելքները, դուրս հորդեցին երկինք ու երկիր՝ իրար խառնելով և ձայնելով մեր ուղեղեն քաջաբագուկ այրերին՝

Տիգրան Մեծ հայոց անպարտելի արքային՝ ծովից ծով իր Հայաստան երկրից,

Վռամշապուհ թագավորին և սուրբ Մեսրոպ ուսուցչին՝ իրենց երեսունվեց անխոցելի զինվորներով,

Քաջ Վարդան զորավարին՝ իր զորք-ժողովրդով ու փափկասուն հայոց տիկնանցով՝ Ավարայրի դաշտից: Նրա քարտուղար դպիր երևելի այր և գիտուն Հովսեփյան հռոմեորին,

Արշակ թագակիր արքային՝ Փառանձեմ թագուհու հետ հայրենի հողով զորացողներին,

**Մեծ ու փոքր Սասնա ծռերին՝ անխտիր,
Խորենացի կոչվող Մովսես Պատմահորը՝ պատմագիր
այրերի հետ,**

**Հայոց հոգևորին Տիրոջ խոսքով զորացողներին,
Ճերմականժույդ հեծվոր Անդրանիկ զորավարին՝ իր քաջ
Փիդայիների հետ,**

**Սարդարապատի հերոսներին, ժողովրդին, զորքին՝ մե-
կիկ-մեկիկ,**

Նժդեհ քաջին իր ցեղակրոնությամբ,

Եվ բազում-բազում այլ մեծաքաջ այրերի»:

Եվ հանկարծ երկինքը կիսվում է երկայնակի, բյուր ու
միլիոն կայծեր են բռնկվում երկնամերձ ու երկրամերձ տա-
րածքներում, ատոմակերպ հյուլեները զարկվում են, բախ-
վում իրար, հայոց մտքի զորությամբ հնազանդ արշավում
դեպի թշնամին, հեռու շպրտում նրան, ապա սկսում ճգմել և
ծանր-ծանր կախվել երկնքից մինչև գետին ու սպասում հրա-
մանի՝ ավերակելու ամեն ինչ:

Սա ի՞նչ միստիկ տեսարան է, ի՞նչ մոգական ուժ է գոր-
ծում, կհարցնեք: Մոգական ոչինչ չկար:

Զինափորձարանում արքան ինքը նույնպես մասնա-
գետների հետ տքնել ու աշխատել է անխափան գործող ուազ-
մական գաղտնի համակարգ ստեղծելու համար, որը մասնա-
կիցների անվանատառերով կոչվել է Նարնախ:

«Ու հասկացան արյան ծարավները, մեծ ու փոքր խան
ու բեկերի հետնորդ-բեկորները արևելքում, գերմարդու զա-
ռանցական մտքեր ըմբոշինածներն արևմուտքում, թե անցել
ու անցյալ է դարը, որ իրենցն էր: Եվ այսու ամոթի դառը
դառնալու է դատապարտված այն ուղեծիրը, ուր պտտվելու
են նրանք՝ խարանված ու ամոթահար ընդմիշտ:

Ու տապալցին իրենց տիրաններին այս երկրի ժողո-
վուրդները, իսկ այսուհետեւ, խորհելով ու կարծիք կազմելով,
իրենց կամքը թղթի վրա մեկիկ-մեկիկ շարադրելով՝ խոնար-
հաբար խնդրելով դրեցին նարեկ թագավորի առաջ:

Կամքը նարեկ թագավորինն էր, բայց հաստատողը սե-
փական երկրի ժողովուրդն էր: Նա էր ասողը: Ու նա ասաց՝
Հա՛...»:

Եվ աշխարհի ծագերը բացում են իրենց սահմանները, որպեսզի Հայոց երկրի օրհնված լույսը լցվի և մաքրագերծի բոլորին՝ մանուկից մեծ:

Եվ ընդամենը մի դավադիր ու կույրաչք գիշեր էր բաժանում երկրին ու ժողովրդին երանելի այն պահից, երբ բացվելու էր օրհնյալ լույսը՝ ավետելով ճանապարհի սկիզբը, որը տանելու էր ընդմիշտ փրկության ու Հավերժությունն...

Այդ սպասումների մեջ Նարեկ Ա-ն բաց պատուհանից նայում էր սիգապանծ զույգին՝ միշտ անբաժան Մասիսներին, որոնք, որպես քարեղեն խորհուրդ և ոգեղեն կամք, վեր էին խոյանում արքայանիստ պալատի դիմաց։ Եվ Հանկարծ Արարատի հզոր գագաթին մի կայծ է բռնկվում և, մեծանալով, իր լույսով ողղում ողջ լեռը՝ վերից վար։ Ու տեսնում է Հայոց պատանի արքան Մասիսների ստորոտում տապանը՝ քամուց տարուբերվող, բայց ամուր կանգնած, և Նոյ նահապետին՝ խաղողի տունկը ձեռքին՝ ափն իրեն պարզած։

Եվ այդ պահին նա թիկունքում ոտնաձայներ է լսում։ Շրջվում ու դեմ առ դեմ հանդիպում է իր քաղաքական իդեալին՝ Տիգրան Մեծին։ Սա նրա երկրորդ հանդիպումն էր Հայոց արքայից արքայի հետ։ Ինչպես և առաջին հանդիպման ժամանակ, Նարեկ Ա-ն ծնկի է գալիս և համբուրում նրա աջը։ Իր հերթին Տիգրան Մեծը գորովագութ ծնողի պես ծնկի է իջնում և իր վեհաշուր գլուխը հպում Նարեկ թագավորի լուսապայծառ ճակատին՝ ասելով՝ «Թող զորավիդ լինի ոգիս ընդմիշտ քեզ, որդիս», — ու նրան հանձնում իշխանության խորհրդանիշ գավազանը՝ հանձնարելով՝ իր հետեւից տանել նախաստեղծ այս ժողովրդին, ու աննկատ հեռանում։

Նարեկ Ա-ն մոտենում է գրասեղանին և, վերցնելով իր խղճի պես մաքուր մի թուղթ, գրում. «Ես Նարեկ Հայոց թագավորս...», — որպես Հայոց պատմությունն արժանապատվորեն շարադրող արքա...»

Նարեկ Հովսեփյանն իր «Նոյյան աղավնու վերադարձը» էսսե-վիպակը գրել է մտածված, տրամաբանված, գուսապ, սրտի ցավով, նվիրյալ հայորդու պատվախնդրությամբ։ Պա-

տումը շաղախված է թեավոր խոսքերով ու իմաստնություններով:

Սա իրական հիմքի վրա ստեղծված, ծրագրային դրույթներով հարուստ, երկրի ու ժողովրդի փրկության իրագործելի նախագիծ է: Սա իր ծննդյան պահից ճգնաժամի մեջ հայտնրված Հայաստանի անկախ հանրապետության ու նրա ժողովրդի համար ստեղծված ծանրագույն կացությունից դուրս գալու ծրագրի նախագիծ է: Սա հակաճնաժամային նախագիծ է, որը պետք է դրվի մեզ օդ ու ջրի պես այնքան անհրաժեշտ ազգային ծրագրի հիմքում, որն այդպես էլ հանգանակ չի դառնում, մեզ համար մնում է որպես հեռո՛ւ-հեռավոր կամ անհասանելի ու անիրականանալի երազանք...

Նարեկ Հովսեփյանը միանգամայն ճիշտ է հասկացել մեր երկրում ստեղծված կացությունն ու գերտերությունների խաղերը հայոց սրբազն հայրենիքում: Հայության դեմ ուղղված մարտահրավերներին դիմակայելու համար նա կարևորել է երկրի ազգային անվտանգության գերակա գործոների՝ հայկական դպրոցի ու մշակույթի անաղարտության և առողջության պահպանումը, որոնցով զինված կկարողանանք կռել մեր մյուս հաղթանակները:

«Փոքր ածուկ» արժանապատիվ տերը խստագույնս պահանջում է մեզ չշփոթել «փոքրավորի հետ», որովհետեւ, որպես ազգ, «մենք հին ենք, բայց ոչ հնացած», որովհետեւ «Հայոց երկիրը մերձենում է երկնքին»:

Մեր երկիրը երկնքին մերձեցնողներից մեկն էլ, անկասկած, նարեկ Հովսեփյանն է, որը եկավ ու անցավ լուսաստղի պես... ՆԱ ԳՆԱՅԻ ԻՐ ՄՈԼՈՐԱԿԸ՝ որտեղից եկել էր՝ իմաստնության ի՞ր տաճարի դուռը մեր առաջ մեկընդմիշտ թողնելով բաց...

2011

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Սիլվա Կապուտիկյան

ԱՍՏՎԱԾՀՆՏԻՐ ՊԱՏԱՆԻՆ

Նարեկ Հովսեփյանի «Առաքելություն իմաստնության տաճար» փոքրածավալ գիրքը («Հայաստան» հրատարակչություն, 2005 թ.) կարդալիս ես մի քանի անգամ վերադարձա առաջին էջին՝ ճշտելու, ճշգրտելու այնտեղ հրապարակված կենսագրական տվյալները՝ իսկապե՞ս ծնվել է 1986 թ. ու մահացել 2004-ին, իսկապե՞ս ապրել է ընդամենը 17 տարի... Ուրեմն բոլոր այս տարիներին, երբ մենք՝ մեծահասակներս, տարված ենք եղել մեր վեճերով ու պայքարներով, մեր մեծ ու փոքր առօրյա հոգսերով, իջևան փոքրիկ քաղաքում, մտավորականի սովորական մի ընտանիքում ծնվել ու մեծացել է արտակարգ մի երեխա, համարյա հրաշամանուկ:

Դեռ հազիվ պատանի՝ հրապարակ է հանել գիտական աշխատություններ՝ մետաղի կարծրությունը մեծացնելու, ներքին այրման շարժիչների օգտակար գործողության գործակիցը բարձրացնելու մասին, կազմել է ավտոմեքենաների՝ առաջին նմուշներից մինչև վերջին նմուշն ընդգրկող ուսումնասիրություն-հավաքածու և միաժամանակ գրել է՝ ոչ պատանեկան ոտանավորներ, առաջին սիրո տվյալունքներով թրթուացող նամակներ ու օրագրեր, այլ սեղմ, կարճառու խոհագորություն, փելիսոփայական մտածումներ, որոնք հիացնում են, ցնցում, ստիպում զարմանալ: Ինչպե՞ս չզարմանաս, երբ կյանք մտած-չմտածը թղթին է հանձնում, օրինակ, այսպիսի գրառություն, փելիսոփայական մի գեպքում գումարելիների տեղերը փոխելիս արդյունքը նույնը չի լինի՝ երբ մարդը հարուստ է նյութապես, բայց աղքատ է հոգով», «Մի առաջ-

նորդվեք շան և տիրոջ հոգեբանությամբ», «Զեզ հաց նետողը կարող է նաև աքացի տալ», «Մարտահրավերներից պատասխանիր միայն նրանց, որոնք պատիվ կրերեն քեզ՝ թե՛ հաղթանակի և թե՛ պարտության դեպքում»», «Հաց մի՛ տուր այն մուրացիկին, որը տառապում է որկրամոլությամբ», «Կարգ ու կանոն հաստատելու պատրվակով սեփական ժողովրդի դեմ ձեռք բարձրացնողը ոչ թե օրենքի պահապանն է, այլ օրենքի ստրուկը»:

Կարդում ես գիրքը և չես դադարում ինքդ քեզ հարց «տալուց»՝ որտեղի՞ց այս հազիվ պատանիացող տղայի մեջ այսքան հասունություն, հոգու փորձ, ընդհանրացման կարողություն, այսպիսի լեզու՝ դիպուկ, լակոնիկ, զգացածը ձևի բերելու հմտություն։ Իսկ հապա «Նոյյան աղավնու վերադարձը» վերնագիրը կրող յուրատիպ, սրտի մաքուր այրումով գրած կիսաիրական-կիսահեքիաթային հորինվա՞ծքը։ Ասես նորօրյա վիպասք է, նորատիպ էպոս, ու հերոսն էլ՝ նարեկ Առաջին թագավորը, Սասնա ծոերի շառավիղն է, 1000 տարի հետո հայտնված մի նոր միամիտ ու արդարախոս Սասնա մանուկ, որ անհավասար կռվի է բռնվում ժամանակակից Մարա Մելիքների հետ։ Ասես մեր հեքիաթներում գործող երեք եղբայրներից կրտսերն է, որ ինքնավստահ ճամփա է ել-նում՝ գտնելու հազարան բլրուլը կամ անմահական ջուրը՝ իր երկրի վերքերը դարմանելու, իր անկյալ ժողովրդին ոտքի կանգնեցնելու համար։

Գրքի նախախոսքում նարեկի մասին գրված է՝ «Երբ ծնվեց, տան գլխավերեռում հայտնվեց երկնային լուսատու մի գունդ՝ լուսավորելով տունը, բակը, թաղամասը։ Հրե գունդը անսպասելի կիսվեց ու հեռացավ»։

Ես, առհասարակ, հակած չեմ հավատալու նման հրաշապատում նախանշանների։ Բայց կարդալով գիրքը, չես կարող չհավատալ, որ այս տրտմաչյա պատանու մեջ ինչ-որ վերին ուժ – կոչենք այն բնություն, նախախնամություն, Աստված դրել է մի առաքելական ներշնչանք, շնորհ, տվել է մեր ժողովրդի ձիրքերի դարակուտակ շտեմարանից մի ահագին բաժին։

Իր սեղմագրություններից մեկում Նարեկը ասում է. «Ապավինելով կյանքին՝ տրամաբանություն փնտրեք նաև մահվան մեջ»: Դժվար է տրամաբանություն փնտրել անչափ շատ ասելիքի ու անելիքի կոչված տասնյոթամյա պատանու ցավագնորեն վաղաժամ մահվան մեջ, որ վրա է հասել անսպասելի, սրտի հանկարծական մարումով: Թերեւս այն, որ աշխարհ է եկել, որպեսզի գիսաստղի պես մի պահ երես երկնքում, իր բյուրեղյա լույսով լուսավորի մեր մթագնած հոգիները, մղի մեզ ինքնամաքրման, ինքնահսկումի և իր ահազանգող վախճանով օդնի մեզ բացելու արդարության արգելափակված ճանապարհները...

20.02.06

Երևան

«Հայաստան» օրաթերթ,
3. 03. 2006

ՅԱՎԵԼՎԱԾ

ՆԱՐԵԿ ՅՈՎՍԵՓՅԱՆԻ ՄԱՔՍԻՄՆԵՐԻՑ

Յուրաքանչյուր դարաշրջան ունեցել է գեղեցկության ընկալման իր չափանիշները, սակայն, ավազ, նրանցից ոչ մեկը դույզն-ինչ ջանք չի արել փրկելու աշխարհը, այլ կամա թե ակամա ասպարեզը թողել է հրեշավորին ու այլանդակին:

Երբեմն անհատների որոշ բացահայտումներ անհարիր են ներկա հասարակության ըմբռնումներին և կարող են ճակատագրական լինել հենց նրանց համար՝ սխալ հասկացվելու դեպքում, և ճիշտ ու ճշմարիտ է, թե ամեն ժամանակ իր պահանջն ունի, և ժամանակից առաջ ընկնող հանճարն անդամ չի ներվում:

Նա, ով կարողանում է կուտակել ամպրոպաքեր ամպեր, սակայն չի կարողանում անձրևել, ուրեմն բախվել է խելացի պահվածքի և նույնքան խելացի պաշտպանության:

Երբեմն երկու կետերը միացնող ուղին ճակատագրի հեղնանքով կարող է ամենաերկար ճանապարհը լինել:

Ամենասարսափելին դռները թակող անորոշությունն է:

Ճակատագիրն այնտեղ է, որտեղ առավել հաճախակի են բախվում կրքերը...

Մեր գոյության միակ իրական երաշխիքը աշխարհում ժամանակն է:

Երազենք անսահմանության մասին, բայց գործենք իրատեսության սահմաններում:

Երազանքը մեր մտքի ստեղծագործությունն է, երազը՝
բնության:

Ամեն ինչ երկրի վրա չչափենք մարդկային գգայարան-
ներով և զգայականի չափանիշներով.

Կա նաև երևակայության աշխարհը, որի բանալին
մարդկային ոգին է:

Կյանքի առաջադրած մեծ ու փոքր հարցերին կարելի է
պատասխանել, եթե այն չի հակասում բանականության էթի-
կային...

Անկախ մեր կուրության աստիճանից՝ արևի լույսը տիե-
զերքում տարածվում է սահմանված արագությամբ...

«Ամեն ինչ կամ ոչինչ» սկզբունքով առաջնորդվողները
հավանաբար լավ չեն հասկացել, որ իրենք ընդամենը երկիր
մոլորակի բնակիչներ են՝ ենթակա ժամանակին:

Ոչինչը ոչնչության ծնունդն է, իսկ ոչնչությունը՝
ոչնչի:

Կյանքը երկրի վրա սկզբնավորվել և շարժման մեջ է
դրվել Բարձրագույն բանականության կողմից, սակայն այն
տրամաբանական վախճանին կհասնի գերիշխանության հան-
դեպ մեր հիվանդագին պաշտամունքի հետևանքով:

Զեր լավագույն գործերի իրական դատավորը ժամա-
նակն է, վատթարագույնինը՝ նույնպես:

Քեն մի պահեք օվկիանոսից նրա անափ մեծության
համար...

Վերջնակետ հասնելու ճանապարհից յուրաքանչյուր անակնկալ վերադարձ լուռ խոստովանություն է գաղտնաշղերծված պարտության մասին...

Փարավոնական փառատենչությամբ մի տառապեք, եթե անդամ ձեր տան տանիքը պատահաբար նման է բուրգի:

Հզորների դեմ պայքարը սահմանափակվում է հնարավոր այն շրջանակներում, որը ուղիղ համեմատական է մեր կարողություններին:

Նրանք, ովքեր կարող են հեքիաթ պատմել արդարության մասին՝ առանց նրա հաստատման համար ազնվորեն պայքարելու, պարզապես զբաղված են խաբեությամբ:

Մեծ ու փոքր ազգերի ճակատագիրը հանձնված է կյանքի ափ կոչվող գետին:

Փոքրերը, աննշան տաշեղի պես ափեափ գարկվելով ու երբեմն չհասնելով, դանդաղ լողում են դեպի նպատակակետ, իսկ մեծերը հոսանքի բանուկ մասով արագընթաց լողում են դեպի օվկիանոս, դեպի լիություն և անսահմանություն:

Այդպես եղել է, այդպես է, այդպես լինելու է ընդմիշտ:

Մեկը կարող է գրքերի տեր լինել, իսկ մյուսը՝ նրանց մեջ խտացված մտքերի...

Լուցկու հատիկի գորությանը հավատում ենք միայն հրդեհված քաղաքի ավերակների գոյության առկայությամբ...

Սրբություններով կարող է երդվել միմիայն նա, ով գիտե սրբության գինը:

Խռովյալ հոգու տառապանքը միայն երկու հոգու է հայտնի՝ Աստծուն և տառապյալին:

Մեղադրյալի վերջին խոսքը նման է անապատում հնչող ձայնի...

Մենք հավատում ենք այն ամենին, ինչը հասու է մեր զգայարաններին:

Իսկ ինչ դուրս է այդ սահմաններից, մենք համարում ենք երևակայություն:

Բուրգը հիմքում լայն է, հենման կետը՝ մեծ, կործանման վտանգը՝ փոքր, տեսադաշտը՝ սահմանափակ:

Գագաթին հենման կետը կախյալ է, զբաղեցրած տարածքը՝ փոքր, կործանման վտանգը՝ մեծ, տեսադաշտը՝ անսահմանափակ:

Խոնարհվել հիմքի՞ն, թե՞ գագաթին.

Այս է խնդիրը...

Համոզվածությունը ոչ թե փորձի արդյունք է, այլ ինքնավստահություն:

Զի կարելի դատապարտել ճակատամարտը տանուլտված այն գեներալին, որի թիկունքում կատարյալ ամայություն է...

Նիցեի գերմարդը զրկված է հոգեկան կատարյալ ապրումներից, հետևաբար՝ մարմինը կառավարող կատարյալ մասից զուրկ գերմարդն այն է, ինչ մեզ տեղյակ է պահում պատմության պատկերասրահը՝ Ներոն, Հիտլեր, Ստալին...

Ասում են, թե խաղաղության խորհրդանիշ աղավնին Պիկասոյի ձեռքի գործն է:

Ասում են նաև, թե Աստվածաշունչ մատյանը վկայում է, որ Աստծու և Քրիստոսի մարմնից բխած հզոր էներգիայի միասնությունը մեզ երևացել է աղավնու տեսքով:

Կեցցե Պիկասոյի հանճարը, որ մեզ բացահայտել է բիբ-
լիական գերհզոր էներգակիր աղավնուն՝ սուրբ երրորդու-
թյանը՝ խաղաղության ավետարերին:

Կույր աչքերի առաջ սուր ճոճելը նույնքան անիմաստ
գործ է, որքան կույր հոգու համար իմաստափառ դասերը:

Ասում են, թե՝

Բոլոր ճանապարհները մեզ կարող են տանել Հռոմ։
Ասում եմ՝

— Իսկ նրանցից քանի՞սն ի վիճակի կլինեն մեզ դուրս
հանել Հռոմից։

Նիցշեն համոզված մեզ ուզում է պարտադրել, թե ար-
վեստը ծնունդ է մարմնատենչության, սակայն մոռանալով
մոռանում է, որ արմատն առանց էության չի կարող լինել,
խավարը՝ առանց լույսի, մարմինը՝ առանց հոգու, և մարմ-
նատենչությունը՝ առանց սրտի թրթիռի...

Հուսախաբված երազանքներն իրենցից հետո մատնա-
ցույց են անում հիսութափության և հուսալքության ուղին,
սակայն մի՞թե աշխարհը մեզնով է սկսվել և մեզնով էլ
ավարտվելու է, մարդի՛կ։

Փակ դռներ բացելու երկու միջոց կա՝ փող և բանալի։

Յուրաքանչյուր փակուղի ստեղծվում է ձշմարտությու-
նը ես-ի տեսակետից մեկնաբանելու հետևանքով։

Մեծամիտը իր տգիտության զոհն է։

Հասուն մարդու կողմից մանկություն վերադառնալու
փորձը դատապարտված է ձախողման, որովհետև ծերացող
մարմնի և երիտասարդ մնացած հոգու և՝ ձգտումներն են
տարբեր, և՝ հնարավորությունները։

Ճակատագրի շփացած զավակները ևս ունեն իրենց պրոբլեմները:

Մարդկային մտքի սանձահարման մի եղանակ է մեզ հայտնի՝ սպանություն:

Կայծակ սանձահարելու մարդու ցանկությունը մնում է երազանք.

Առայժմ կայծակն է սանձում մարդուն՝ առանց երազանքի:

Որպես աշխատասեր մեղուների պարս, ջանադիր լինենք ուսման ծաղկադաշտերից պետություն-փեթակի համար կենասբեր նեկտար ամբարելու և մեղրուղեղ դառնալու համար:

Եթե գիտությունը պատկերենք ուղղաձիգ զսպանակի տեսքով, որի հիմքն ամրացված է, իսկ գագաթն ազատ ձըգվում է վեր, ապա, գալարի սկիզբը հաղթահարելով առանց ջանքերի ու աստիճանաբար բարձրանալով, գալար-գալար կսպառենք մեր ուժերը, իսկ զսպանակը կդառնա ավելի երերուն՝ մեծացնելով անկման վտանգը և դժվարացնելով դագաթ հասնելու հավանականությունը:

Մի՞թե զսպանակի ստորին և վերին գալարները կրկնում են իրար, և մի՞թե այստեղից հետևում է, թե կրկնությունը գիտության մայրն է:

Տիեզերքը բազմակերպ մարմինների քառոս է, որոնց էությունը ճանաչելով միայն կարող ենք խոսել բանականության մասին:

Մի՞թե լեզվից զրկված մարդը դադարում է մտածելուց, և մի՞թե լեզու ունեցող յուրաքանչյուր կենդանի օժտված է մտածողությամբ:

Բոնապետների ամենամեծ թերությունը, սեփական հըս-
կայածավալ դիմանկարներով հիանալուց բացի, իրենց եզա-
կիության մասին ենթակաների հորինած առասպելին անվե-
րապահ հավատալն է...

Մարգական խաղերն աստիճանաբար նմանվում են քա-
ղաքական խաղերի. կուլիսային բանակցություններն են որո-
շում նրա ելքը:

Մարմինն ապրում է այսօրով, հոգին՝ ապագայով: Եթե
ներդաշնակենք այս երկուսը, կվայելենք բնության հովանա-
վորությունն ու սերը, հակառակ դեպքում՝ պարզապես կդառ-
նանք կենդանական տեսակերից մեկը՝ առանց բանականու-
թյան՝ գերի կույր բնագդներին:

Մեր իմաստնությունը կուտակենք որպես ամպրոպարեր
ամպեր, բայց անձրենք՝ կենսատու լինելով բնությանը:

Իմաստունների մտքերի շարահոս ընթացքը բացահայ-
տում է այն ճանապարհի իմաստը, որը աներկբա տանում է ի-
մաստնության աշխարհ:

Ժամանակի մոռացության փոշին, առանց իսկ մեր
կարծիքը հարցնելու, աննկատ ծածկում է հիշողության ծալ-
քերը՝ կորստյան մատնելով հնարավոր այն ամենը, ինչը այդ-
քան ջանադրորեն նախապատրաստել ենք մեր չլինելուց հե-
տո իմաստնության տաճար մուտք ունենալու համար:

Կարդա՛, այս է գիրս, և ոգեշնչումս իմաստնության Տա-
ճարից է:

Կարդա ու տար աշխարհին, և թող տկարներին հույս լի-
նի, զորեղներին՝ դաս, իմաստուններին՝ հավատ, հոգով աղ-
քատներին՝ լույս...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան

| | |
|--|-----------|
| Հրաշամանուկը, Աելիտա Դոլուխանյան..... | 4 |
| Երկու խոսք | |
| Իմաստնության տաճարի դեսպանը..... | 11 |
| Նա կդառնար մտքի տիրակալ, եթե... | 15 |
| Վերջաբանի փոխարեն | |
| Աստվածընտիր պատանին, Սիլվա Կապուտիկյան..... | 69 |
| Հավելված..... | 72 |

ՀԱՍՏԻԿ ԳՈՒԱԿՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ. ԱՌԵԴՎԱԾԱՅԻՆ ԱԿՆԹԱՐԹ

ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐ

*Խմբագիր՝ Աելիտա Դոլուխանյան
Ոճաբան և սրբագրիչ՝ Օֆելյա Միքայելյան
Կազմի ձևավորումը՝ Արաբո Սարգսյանի*

*Ստորագրված է տպագրության 28. 12. 2013:
Զափուր՝ 60 x 84, 1/16, թուղթ՝ N 1, օֆսեթ տպագրություն:
5 տպագրական մամուլ:
Գինը՝ պայմանական:*